

ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՂԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ

40 Յուշեր 40-Ամենակի

2020

ՅՈՎԵՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԵՐԵԱՆ

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ

40 Յուշեր 40-Ամեակի

2020

Ց Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Ց

	Էջ
Քայլ առ Քայլ	5
Յունիս 8, 1980 Տօն Ս. Էջմիածնի Կաթողիկէին	7
Վազգէն Ա. իմ հոգեւոր ծնողը	8
Քառասնօրեայ աղօթքի ու պահեցողութեան օրեր	10
Կիրակի, 10 Յուլիս 1980 Տօն Վարդավառի/Պայծառակերպութեան Անդրանիկ Ս. Պատարագ	11
Նոր ճանապարհ	12
Օքսֆորտ	13
Լոնտոնեան Յուշեր	15
Դեկտեմբեր 1980. Առաջին ճանապարհորդութիւնս Միացեալ Նահանգներ	16
Հրաւեր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանէն	18
Երիտասարդական առաջին ուխտագնացութիւնը	20
Շրջանաւարտ Օքսֆորտ Համալսարանի Աստուածաբանական Բաժանմունքէն	22
Մայր Աթոռ Ուսուցչական Առաքելութեամբ	23
Ապրիլ 1984. Աւագ Շաբաթը Պաղտատ	25
Թորոնթօ 1984	27
Ս. Երրորդութիւն Հայց. Եեկեղեցւոյ Նոր Կառոյցը	28
Դեկտեմբեր 7, 1988 Հայաստանի Երկրաշարժը	29

Բ. Առաջնորդ Գանատահայոց Թեմի	31
Եպիսկոպոսական Ձեռնադրություն եւ Օծում. Կիրակի, 7 Հոկտեմբերի, 1990	32
Եպիսկոպոսական Անդրանիկ Պատարագ. Կիրակի, 14 Հոկտեմբերի, 1990	33
Գանատահայոց Թեմը	34
Քահանայական Ձեռնադրություններ	35
Նոր Համայնքներ	37
Գրական-Սստեղծագործական Աշխատանքներ	38
Երուսաղեմ Առաջին Ուխտագնացությունս	39
Ս. Էջմիածնի Միաբանական Հաւաքին Ծնունդը	41
Համագազային Հայ Եկեղեցասեր Երիտասարդացի Կազմակերպումը	42
Մայիս 3, 2003. Առաջնորդ Արեւմտեան Թեմի	44
Նոր Համայնքներ ու Եկեղեցիներ	46
Առաջնորդությունը Վերակազմուած եւ Հայաստանեան Ծրագրեր	47
Սիրտս Քեզ Բացի	48
Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Վերանորոգություն	50
Հայ Դպրոց	52
Հայոց Հայրապետները	53
Եղեռնի 100-Ամեակը	54
Նոր Օրեր. Անտեսանելին	55

Համաճարակը եւ Հայաստանը	56
Ո՞վ է Եկեղեցականը. Ո՞վ է Հոգեւորականը	57
Տակաւին Հեռանկարներ Ունիմ	58
Նոր Ձեռնարկը... Կեանքի Ուղիներս Հարցազրոյցով	59

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ

«Ուխտս դիք եւ կատարսեցուք...»:

Քառասուն տարիներ առաջ Աստուծոյ առջեւ ծնրա-
դիր եւ Ս. Էջմիածնի Մայր խորանի վրայ ուխտս կատա-
րեցի կեանքս ընծայաբերելու իմ սուրբ եկեղեցիին բոլո-
րանուէր սրտով: Քառասուն տարիներու ծառայական
կեանքս արձանագրած է բազմերանգ էջեր, որոնք կը
ներկայացնեն իմ հոգու պատկերը: Եւ ամէն անգամ,
երբ աղօթքի առանձնակի պահ մը կ'ունենամ, այն կը
դարձնեն անդրադարձումի առիթի մը, բայց նորովի
ուխտով կեանքս շարունակելու խոստումին սկիզբը:

Քառասուն տարիներու հոգեւոր ծառայութեանս
ընթացքին յարատեւօրէն զգացի Աստուծոյ Աջին զօրու-
թիւնը, որուն մէկ այլ արտայայտութիւնը գտայ նաեւ իմ
փառաւոր ժողովուրդի մէջ: Ծառայութեան այս ամբողջ
շրջանը ինձ համար դարձաւ ճշմարիտ դպրոց մը՝ լեցուն
զանազան փորձութիւններով հարստացած: Անընդհատ
սորվեցայ, յաճախ արձանագրեցի սխալներ, բայց եւ
միշտ ու քաջաբար ընտրեցի վերադարձի քայլը՝ ինք-
զինքս սրբագրելու: Աստուծոյ սէրը մշտապէս զգացի եւ
մարդկային կարողութեանս ներածին առաւելագոյն
չափով փորձեցի Աստուծոյ պարգեւածը փոխանցել իմ
ժողովուրդին: Հոգեւոր սպասաւորութիւնը ինչե՛ր սոր-
վեցուց ինձ, որպէսզի մնամ հաստատ իմ հոգեւոր կոչ-
մանը մէջ: Աստուծոյ յանձնատու դարձայ կեանքովս եւ
հաւատացելոց աղօթանուէր կեանքով իմ մէջ ամէն օր
աճեց հոգեւորականը: Ուրեմն ինչքա՛ն երախտապարտ
եմ բոլոր անոնց, ովքեր իրենց աղօթքով մաս ու բաժին
են բերած իմ հոգեւոր սպասաւորութեան կեանքի ճա-
նապարհին:

Իմ աղօթքն առ Աստուած իմ պատուական ծնողացս
համար, որոնց սէրն ու գուրգուրանքը առաջնորդեց զիս:
Իմ խոնարհումը իմ հոգեւոր ծնողին՝ հոգելոյս Վազգէն

Վեհափառին, որուն ներկայութիւնը ինչպէս շատ-շատերուն, այնպէս ալ իմ կեանքը յեղաշրջեց դէպի Սուրբ Էջմիածին: Իմ երախտագիտութիւնը բոլոր այն հոգեւոր սպասաւորաց եւ հաւատացելոց, որոնք ինձ ներշնչեցին իրենց հաւատքի կեանքով: Այսքան հոգեւոր հարստութեամբ լեցուեցաւ կեանքս եւ այսօր քահանայական ձեռնադրութեանս ու օծման 40-ամեակի առիթով իմ մէջ անգամ մը եւս կը զգամ նորոգութիւնը իմ ուխտին՝ մնալու խոնարհ ծառայ Աստուծոյ եւ իմ սուրբ եկեղեցիին:

ՅՈՒՆԻՍ 8, 1980 ՏՕՆ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿԷՒՆ

Յիշողութեանս մէջ դեռ այնքան թարմ է Կիրակի, 8 Յունիսի 1980 թուականը, երբ Ա. Էջմիածնի Մայր խորանի վրայ ծնրադիր կատարեցի քահանայական ուխտս եւ ձեռնադրութիւն ու օծում ստացայ ձեռամբ երջանկայիշատակ Վազգէն Ա. Սրբազնագոյն կաթողիկոսի: Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնն էր: Օրն իրօք տօնական տրամադրութիւններով էր լեցուն: Վեհափառը խանդավառ ոգով յղեց իր պատգամը հետեւեալ առաջնորդող խօսքով. «Էջ Միածինն ի Հօրէ ահեղ զօրութեամբ»:

Կեանքի մէջ կան այնպիսի պահեր, երբ էութեանը մինչեւ խորքը կը զգանք անբացատրելի հոգեւոր ներքին շարժում մը: Այդպիսի հոգեկան յոգեբով հարուստ օր մը դարձաւ Կիրակի, 8 Յունիսը իմ կեանքի մէջ: Իմ մէջ կը կրեմ օրուան խորհուրդը եւ անդադար փառք կու տամ Աստուծոյ, որ ինձ պարգեւեց ձեռնադրութեան եւ օծման անկողոպտելի գանձը:

Մինչեւ այսօր կ'ապրիմ ձեռնադրութեան յաջորդող ժողովուրդի շնորհաւորանքներու պահը: Աջահամբոյրի պահը աւանդութիւնն է մեր սուրբ եկեղեցւոյ, եւ այն իրօք պարտաւորեցնող է, որ մնանք խոնարհ սպասաւոր մեր սուրբ եկեղեցւոյ: Հետեւաբար, ամէն անգամ, երբ կը վերյիշեմ այդ սրբազան պահը, ինքնըստինքեան իմ մէջ կը նորոգուի կոչումը քահանայութեան, եւ կարծես մանուկի մը պէս կը զգամ նոր ծնունդը կեանքիս:

Օրինեալ է յիշատակը Վազգէն Վեհափառին: Օրինւած է Կիրակի, Յունիսի 8, 1980 թուականը իմ կեանքի մէջ, եւ անդադրում իմ հոգու մէջ կը լսեմ ձայնն աղօթքներուն ներկայ հաւատացելոց, ովքեր ամրապնդեցին իմ մէջ հաւատի կեանքը:

ՎԱԶԳԷՆ Ա. ԻՄ ՀՈԳԵԻՈՐ ԾՆՈՂԸ

Քահանայական ձեռնադրության եւ օծման 40-ամեակի առիթով իմ խոնարհումը կ'ուզեմ բերել հոգելոյս Վազգէն Ա. Վեհափառի յիշատակին: Օրինուած կը զգամ, որ ան դարձաւ իմ հոգեւոր ծնողը եւ իր վեհափառ ներկայութեամբ մշտապէս ներշնչեց ինձ եւ կը շարունակէ զօրացնել նուաստս քահանայական կոչման մէջ: Անդադրում իմ հոգու մէջ կ'արձագանգեն իր պատգամները, որոնց մէջ ես կը զգամ նորոգութիւնը իմ հոգեւոր կեանքի, եւ գիտակցութիւնը երկնաւոր այն շնորհներու տրուած բոլորիս անխտիր:

40-ամեակը հրաշալի առիթ մըն է յետադարձ ակնարկով մը քննելու անցեալ չորս տասնամեակներու իմ հոգեւոր կեանքի ճանապարհորդութիւնը եւ փորձելու քննել առանձին հանգրուանները, որոնք եղած են նաեւ նպատակակետ դէպի Աստուած տանող ճանապարհորդութեանս: Անշուշտ 40-ամեակը առիթ է նաեւ վերլուծելու այն փորձութիւնները, որոնք թէեւ իմ հոգեւոր կեանքի ընթացքին եղած են ցաւի ու յուսախաբութեան պահեր: Բայց մէկ բան յստակ է, որ երբեւէ չեմ տկարացած եւ միշտ իմ մէջ առաւել ամրացուցած հաւատքի գիտակցութիւնը:

Հոգեւոր կեանքի ճանապարհորդութեանս ամբողջ ընթացքին հոգելոյս Վազգէն վեհափառը իր տեսիլքներով ինձ մշտապէս առաջնորդեց: Իր խոհական կեանքով ինք ինձ համար դարձաւ մտատիպարը: Անոր պատգամները անկասկած կ'արձագանգեն իմ էութեանը մէջ եւ կոչ կ'ուղղեն նուաստիս, որպէսզի երախտագետ սրտով աղօթքս առաքեմ առ Աստուած, որ մշտապէս օրհնեց իմ կեանքը քահանայական կոչումով: Եւ ամէն անգամ իմ սրտէն աղօթք կատարելով՝ այնպէս զգացի, որ հոգելոյս վեհափառը աղօթակից էր նաեւ ինձ, ինչպէս շատերուն:

Եւ այս տողերը կ'արձանագրեն, ներքին զգացումէ մը մղուած կ'ուզեն խոնարհիլ քու շիրիմիդ առաջ եւ իմ ծառայական կեանքով դառնալ անթառամ ծաղիկ: Երանելի եմ, որ Աստուած օրհնեց իմ քայլերը դէպի Ս. Էջմիածին, եւ այն նոյն սուրբ տեղի մէջ դուք դարձաք ոսկի կամուրջը Աստուծոյ եւ նուաստիս միջեւ: Ձերդ վեհափառ ներկայութեամբ յեղաշրջեցիք իմ կեանքը, եւ ես իմ մէջ զգացի վերածնունդը նոր կեանքին:

ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔԻ ՈՒ ՊԱՀՇՑՈՂՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Կիրակի, 8 Յունիսի 1980 թուականի երեկոյեան հոգելոյս Վազգէն Ա. Վեհափառը ընդունեց իր ձեռամբ քահանայական ձեռնադրութիւն եւ օծում ստացած քահանաներու եւ իր մտերմիկ գրոյցի ընթացքին իր հայրական խրատականը յղեց մեզ: Ինձ համար այդ երեկոն կը մնայ չափազանց յիշարժան: Իր խօսքերուն մէջ յատկանշական էր այն պատգամը, որով հայրապետը կը յանձնարարէր հետեւեալը. «Դուք այսօր դարձաք Աստուծոյ ծառայ եւ նորակոչ սպասաւոր Հայց. եկեղեցւոյ: Որպէսզի ձեր ծառայութիւնը ըլլայ լիարժէք ձեր ժողովուրդի համար, տեղի չտաք եւ չանդամակցեք եկեղեցիէն դուրս կազմակերպութեանց: Այսուհետեւ դուք հովիւ էք բոլորի համար, եւ որպէսզի խօսքն ու գործունէութիւնը մնան հեղինակաւոր, ապա ձեր ծառայութիւնը պիտի ըլլայ Աստուծոյ եւ Հայց. եկեղեցւոյ...»: Եւ այդ օրուրն էս այդ խրատականը որպէս ոսկի պատուիրան պահեցի: Վեհափառի աջը առինք եւ անցանք քառասնօրեայ աղօթքի ու պահեցողութեան ըստ Հայց. եկեղեցւոյ ընկալեալ աւանդութեան:

Արդարեւ, քառասնօրեայ աղօթքի ու պահեցողութեան շրջանը դարձաւ հոգեւորապէս զինուելու ժամանակը բոլորիս համար: Այսօրուայ պէս կը մտաբերեմ աղօթքի ու պահեցողութեան քառասնօրեայ շրջանը: Երանի թէ այդ նոյն փորձառութիւնը ժամանակ առ ժամանակ հաստատուի հոգեւորականի կեանքի ընթացքին: Իսկ այս օրերուն քորոնավիրուսի մեկուսացման ժամանակը տեսակէտով մը դարձաւ «անապատին» մէջ աղօթքի օրեր: Մնացի հոգեւոր իմ ծառայութեանը մէջ եւ միաժամանակ ինձ համար ստեղծեցի խոկումի ու գրառումներու պատեհ առիթի մը: Եւ այսօր, իրօք իմ մէջ կը զգամ նոր սկիզբը իմ հոգեւոր ծառայութեան: Եթէ կամաւորապէս ցանկութիւնն ու մտադրութիւնը ունենայի քառասնօրեայ աղօթքի ու պահեցողութեան նոր շրջան մը ծրագրելու, երեւի ալ չաջողի: Ուրեմն այս փորձութիւնը կ'ընդունեմ որպէս պարգեւ մը Աստուծոյ կողմէ:

ԿԻՐԱԿԻ, 10 ՅՈՒԼԻՍ 1980
ՏՕՆ ՎԱՐԴԱՎԱՌԻ/ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 10 Յուլիս 1980 թուականին Ս. Էջմիածնի Մայր խորանին վրայ մատուցեցի իմ անդրանիկ պատարագը: Իմ անդրանիկ քարոզի որպես բնաբան ընտրեցի Պետրոս Առաքելալի հետեւեալ խօսքը.

«Տէր, բարութք է մեզ աստ լինել»:

Եւ իրօք, այդ օրուրնէ մինչեւ օրս Հայց. եկեղեցին դարձաւ իմ կեանքի առաքելութիւնն ու նպատակը: Իմ անդրանիկ քարոզը այնուհետեւ տպագրուեցաւ Ս. Էջմիածնի ամսագրի մէջ եւ այն դարձաւ նաեւ հայելին իմ հոգեւոր կեանքի:

Հոգեւոր ասպարեզը իր եութեամբ նման է Քրիստոսի կեանքին, անհամեմատօրէն շատ-շատ փոքր ու գուցէ աննշմար տարողութեամբ: Օրն այնքան խորհրդաւոր էր ու հոգեպարար, որ մինչեւ օրս արթուն է հոգեւոր եութեանս մէջ եւ մշտապէս տպաւորող: Եւ ամէն անգամ տկար է հոգիս, կ'ուզեմ մտաբերել անդրանիկ պատարագս եւ քարոզս, որովհետեւ վերյիշեցունը այդ պատմական օրուան ճշմարտապէս ու յարատեւօրէն կը զօրացնէ հաւատքս ու կոչումս: Եւ կեանքս օրեցօր աւելի կապեցի եկեղեցիիս ու ժողովուրդիս: Մէկ խօսքով՝ հոգեւոր ասպարեզը դարձաւ նոր դպրոց մը կեանքիս մէջ:

«Տէր, բարութք է մեզ աստ լինել»:

Պետրոս Առաքելալի խօսքը պայծառակերպեց նաեւ նուաստիս կեանքը եւ հպարտութեամբ մուտք գործեցի Աստուծոյ ծառայութեան անդաստանին մէջ:

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ

Իրօք, երիտասարդ հոգեւորականի կեանքին մէջ քահանայական ձեռնադրութիւնը սկիզբն է նոր ճանապարհորդութեան: Յուլիս 10, 1980 թուականով իմ անդրանիկ պատարագէն անմիջապէս յետոյ իմ առջեւ բացուեցան նոր հորիզոններ: Մինչեւ համալսարան մեկնումս, Սեպտեմբերի սկզբնաւորութեան ունեցայ երկու այցելութիւններ Յորդանան եւ Սուրիա, եւ երկուստեք յաջորդաբար ս. պատարագներ մատուցեցի համայնքներէն ներս եւ յաւուր պատշաճի իմ քարոզներս տուի: Այսօրուան պէս կը յիշեմ, թէ որպէս երիտասարդ հոգեւորական ինչքան անփորձ ու անպատրաստ էի քարոզխօսութեան մէջ եւ հիմա լաւագոյնս կ'ըմբռնեմ ու կը հասկընամ, որ ուսման հետ մէկտեղ չափազանց էական է տարիներու փորձը: Որովհետեւ հովուական ու վարչական կեանքի անցած տարիներ իրօք մեզ խօսեցնել կու տան աւելի հիմնաւորուած ու կենդանի պատկերներով:

Յորդանան իմ այցի ընթացքին մատուցեցի ս. Պատարագ եւ այսօրուան պէս կը յշեմ տեղւոյն հովիւին յուշը քարոզէս առաջ, որ անպայման պետք էի գնահատականով անդրադառնալ թագաւորի հասցէին: Արեւելեան երկիրներու մէջ ընկալեալ սովորութիւն մըն էր սա եւ այն կատարեցի: Աւելի ուշ անցայ Դամասկոս, ուր մի քանի օրերու կեցութենէ յետոյ վերադարձայ Երեւան, Ս. Էջմիածին քահանայական ձեռնադրութեանս օծակից եղբօրս՝ Աբելի հետ: Անցնող օրերը եղան սպասումի ժամանակահատուած մը: Ինչքան յստակ էր ինձ համար պատրաստուած ծրագիրը, այնքան կը զգայի, որ պիտի մեկնէի անձանօթ միջավայր մը: Այնուամենայնիւ համարձակ քայլերս առաջնորդեցի դէպի համալսարան:

ՕՔՍՖՈՐՏ

Վերջապես կը հասնին Օքսֆորտ, ուր քայլերս ուղղեցի հոգեւոյս Վազգէն Վեհափառի տնօրինութեամբ: Որոշապէս կրնամ ըսել, որ անհաւատալի անորոշութիւններով լեցուն էին առաջին օրերը: Հեռու Ս. Էջմիածնի տաքուկ մթնոլորտէն, բոլորովին հեռու մտերիմներէ եւ լման օտարութեան մէջ պիտի սկսէի կեանքի նոր ընթացք մը: Բնականօրէն միջավայրը իր նկարագրով հարազատ չէր ինձ համար. մտածողութիւնը այլ, լեզուն անհաղորդ, իւրովի հոգեբանութեան տէր մարդիկ, ուսումնառութեան պայմաններ, կենցաղի նոր ոճ, եւ մէկ խօսքով՝ պահ մը կորսուած վիճակի մէջ էի: Բայց փառք Ամենակարողն Աստուծոյ, որ ինձ պարգեւեց քաջութիւն ու հաւատքի զօրութիւն եւ օրեցօր ես ինձ գտայ հունի մէջ: Համալսարանը ինձ համար դարձաւ իրօք կեանքի առջեւ բացուած Նոր դուռը: Համալսարանական բարձրագոյն ուսումը մէկ կողմէ, արեւմտեան հասարակարգի փորձառութիւնը միւս կողմէ, իրօք ինձ համար դարձան դրականօրէն փորձառութիւն աւելի լաւ եւ մօտիկէն ճանչնալու համար իմ սուրբ եկեղեցին եւ մեր հայրերու ու նախնեաց աղօթքներով նուիրագործուած աւանդութիւնները:

Համալսարանական տարիներուս պատեհ առիթն ունեցած եմ վայելելու դաստիարակութիւնը մեծ հոգեւորականներու կողմէ, որոնց շարքին են Metropolitan Anthony Bloom, Archbishop Michael Ramsey, Metropolitan Kalistos Ware, Archbishop Dr. Robert Reuncie եւ դեռ շատեր, որոնց նկատմամբ կը տածեմ իրօք մեծագոյն յարգանք:

Ուսանողութեան երեք տարիներուն համալսարանը լիովին ըմբռնեցի ոչ միայն ուսումնառութեան տեսանկիւնէն դիտուած, այլեւ՝ համալսարանի բացառիկ մթնոլորտի մէջ կազմակերպուած մշակութային ու գեղարուեստական ձեռնարկներու իմ մասնակցութիւնը

բերելով: Եւ այսօր աւելիով կը զգամ, թէ ինչքան լիցք եմ ստացած համալսարանէն եւ՝ ուսումնական իմաստով, եւ՝ հոգեկան կեանքս հարստացնելու իմաստով: Իրօք, անբացատրելի գիտելիքներ, որոնք առ այսօր կը բաշխեմ եւ կարծեք չի սպառիր կուտակուածը: Եւ այդ է անշուշտ համալսարանի առաքելութիւնը:

Սոյն համեստ ձեռնարկի յաջորդ էջերուն պարբերաբար երեւի անդրադառնամ համալսարանական տարիներու: Կ'ուզէի միայն յուշ մը եւս արձանագրել՝ կապուած Վազգէն Վեհափառին:

Առաջին ամիսներուն Էր, երբ նոր միջավայրին կը դժուարանայի համակերպուիլ, ու գրեցի Վեհափառին՝ անուղղակի անդրադառնալով վերադառնալու մտքին: Եւ այնչափ երախտապարտ եմ Վեհափառին, որ իմ նամակին պատասխանեց եւ յորդորեց յարատեւել ու կեդրոնանալ իմ ուսման վրայ: Գուցէ յաջորդիւ ներառնեմ նաեւ հատուածներ Վեհափառի կողմէ ինձ յղուած նամակներէն: Իսկ աւելի ուշ կը ծրագրեմ հրապարակել ամբողջ նամականին՝ ուղղուած Վազգէն Վեհափառէն մինչեւ իր վախճանումը:

Կարծեք այս օրերուն վերադարձած եմ Օքսֆորտ:

ԼՈՆՏՈՆԵԱՆ ՅՈՒՇԵՐ

Օքսֆորդում ուսանողական տարիներուս պատեհութիւնը ունեցայ մօտիկէն ծանօթանալու առաջին հերթին հոգեւորականներու՝ հոգելոյս Ներսէս Արք. Պոգապալեանին, Պսակ Արք. Թումայեանին եւ շարք մը ազգայիններու, որոնք խորապէս տպաւորած են ինձ իրենց հայրենասիրութեամբ եւ եկեղեցաշինութեամբ: Այստեղ պիտի ուզեմ արձանագրել առաջին հերթին անուններ, որոնք արդէն իսկ ի Տէր են հանգած. Աստղիկ եւ Սարգիս Քիւրքճեան, Ճորճ Քիւրքճեան, Լեւոն Օվանեսօֆ, Օֆելիա Գոյումճեան, Մանուկ Բարիկեան եւ տակաւին շատեր, ովքեր իրօք եղած են հեղինակութիւն եւ որոնց հետ անձնական շփումներս խորապէս տպաւորած են զիս: Այս օրերուն Թէւեւ յառաջացեալ տարիքի մէջ, դեռեւս աշխոյժ կերպով համայնքի կեանքի մէջ կը գործեն Տիար Ասատուր Կիւզելեան, Բրշ. Ստեփան Սրկ. Օվանեսօֆ, Տիկին Անուշ Մեյջըր եւ դեռ շատեր, որոնց հետ եւս ունեցած եմ սերտ համագործակցութիւն: Որոշապէս կրնամ ըսել, որ այս Աւագանին կշիռ ունեցող անհատներէ Եր կազմուած, ովքեր ի մասնաւորի ներգրաւուած էին համայնքի եւ՝ մշակութային, եւ՝ հասարակական եւ բնականօրէն ազգային-եկեղեցական կեանքին մէջ:

Թէւեւ ուսանողի հանգամանքին մէջ էի, բայց կիրակիները սուրբ պատարագ կը մատուցէի Ս. Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ: Կիրակի առաւօտ կանուխ Օքսֆորտէն կ'ուղեւորուէի Լոնտոն, որպէսզի հոգեւոր պարտականութիւնս կատարէի: Ուսանող ըլլալուս պատճառով բնական է՝ չունէի տեսական միջոցներ եւ արդէն իսկ կրթաթոշակի վճարումները հազիւ կը կարողանայի իրականացնել: Միայն այնքան կը յիշեմ, որ թէւեւ դժուարութեամբ, բայց կարօտով կը սպասէի կիրակիին: Իսկ ուսանողութեան երրորդ տարին, եւ յատկապէս վերջին ամիսներուն քննութիւններու նախապատրաստութեան պատճառով Լոնտոն այցելութիւններս կասեցուցի:

Միայն կ'ուզեմ այնքանը ըսել, որ ուսանողութեան երեք տարիներուն լիարժէք ծանօթացայ համայնքին եւ տեսակէտով մը Լոնտոնը դարձաւ իմ հովուական կեանքի առաջին փորձաքարը:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1980 ԱՌԱՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՍ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

1980 Թուականի Դեկտեմբեր ամսուայ առաջին շաբաթներուն կատարեցի իմ առաջին այցը Միացեալ Նահանգներ Ս. Ծննդեան արձակուրդներու առիթով: Այս այցը կարելի դարձաւ ազնուական հայորդիք հանգուցեալ Տէր եւ Տիկին Գեորգ եւ Պերճուհի Ներսիսեաններու շնորհիւ, որոնց ազնիւ բարերութեամբ կարելի դարձաւ Տաւուշի տարածաշրջանի Ս. Ներսէս Ծնորհալի անունը կրող եկեղեցւոյ կառուցման:

Այս այցելութիւնը ինձ համար նշանակալից էր, որովհետեւ ամբողջ տարւոյ մը բացակայութենէ յետոյ կը վերամիանայի ծնողներու եւ եղբարներու հետ, որոնք Լիբանանէն գաղթած էին տեղւոյն քաղաքացիական կռիւներու պատճառով: Ինձ համար ինչքա՛ն ուրախալի էր այս հանդիպումը, այնքան եւս դժուար, երբ ականատես դարձայ իրենց կեանքի դժուարին պայմաններուն: Ամերիկայի Միացեալ Նահանգները շատերու մտածողութեանը մէջ դրախտավայր մը կարծես ըլլար: Միայն թէ այցելողը, որ խորքային իմաստով կը ներթափանցէր այս կեանքին խորքը, պիտի տեսներ, որ այս երկիրը մեր ազգի զաւակաց կեանքին մէջ կը դառնար խոշոր ձուլարան մը, որ ազգային-եկեղեցական կեանքի նկարագիրը պահպանելու համար պէտք էր ովկիանոսի մը տարողութեամբ ուժականութիւն: Հոսանքն այնքան հզօր է, որ ամէն ինչ կը սահմանափակէ միայն ժամանակի մը մէջ: Հեռու Մայր հայրենիքէն եւ ի մասնաւորի արեւելքի համայնքներու ընձեռած նպաստաւոր պայմաններէն, իրօք դժուար է պատկերացնել, թէ ինչքանով կարելի պիտի ըլլայ պահպանել ազգային-եկեղեցական նկարագիրը: Այս ճշմարտութիւնը հասկնալով՝ ներուժը, որուն միջոցով այսօր Ամերիկայի տարածքին կը տեսնենք հա-

րիւրաւոր եկեղեցիներ ու ազգային կառոյցներ, որոնք անկասկած կ'երկարաձգեն ջարդերէն վերապրած մեր ժողովուրդի ձուլումը: Բնական է, սերունդներ ձուլուած են արդէն, բայց հրաշքի համագօր երեւոյթ է տեսնել մինչեւ իսկ չորրորդ սերունդի զաւակները, որոնք եթէ նոյնիսկ լեզուն չեն կրցած պահպանել, այնուամենայնիւ կառչած են մնացած մեր ս. եկեղեցիին ու այն դարձուցած փոքրիկ Հայաստան ու մանրակերտը Ս. Էջմիածնի:

Բնական է, իմ առաջին այցելութեան ընթացքին այս բոլոր իրականութիւնը չի կրցայ տեսնել այնպէս, ինչպէս պարտէի տեսնել: Այս ընթացքին իմ ունեցած փորձառութիւնները իրօք եղան շատ, մանաւանդ համայնքներու այցելութեանց ընթացքին: Այդ օրերուն համայնքը համեմատաբար աւելի նուազ էր թիւով, ի տարբերութիւն այս օրերու բազմամարդ ներկայութեան: Ամիսն անցաւ շատ արագ, եւ վերադարձայ Օքսֆորտ իմ ուսումնական աշխատանքներուն: Գոնէ հոգեպէս խաղաղ էի՝ ականատեսը ըլլալով հանդերձ մտահոգ ի տես ծնողաց կեանքի դժուարին պայմաններուն: Անհաւատալին այս իրավիճակին մէջ մօրս անկոտրում կամքն է՝ յաղթելու բոլոր խոչընդոտները եւ ընտանիքը պահելու անխախտ ու ապահով: Այստեղ անգամ մը եւս հասկցայ, որ մայրերը ողնաշարն են ընտանիքին, ի գին ամէն զոհողութեան:

ՀՐԱԻԷՐ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԷՆ

Օքսֆորտ ուսանողության երկրորդ տարին էր, երբ պաշտօնական հրաւեր մը ստացայ Արեւելեան թեմի օրուայ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսէն՝ տեղափոխուելու Ամերիկա: Առաջարկն այն էր, որ ուսումնա շարունակէի արեւելեան թեմէն ներս եւ այնուհետեւ ստանայի հովուական պաշտօն:

Հանգուցեալ սրբազանը, որ աւելի ուշ դարձաւ Պատրիարքը հայոց Երուսաղէմի, իրօք կը վայելէր բոլորիս յարգանքն ու համակրանքը որպէս առաքինի հոգեւորական, որուն աշխատանքային կեանքն ու ծառայութեան տարիները իրօք ներշնչած էին բոլորս: Այնուամենայնիւ, որոշեցի ուսումնա շարունակել Օքսֆորտի մէջ, այն արդար մտածումով, որ նման քայլ մը իմ կողմէ առնուելիք մեծ թերութիւն մը պիտի արձանագրէր: Քաղաքավարութեամբ ու շնորհակալութեամբ պատասխանեցի սրբազանի հրաւերին նաեւ այն հաստատ համոզումով, որ սրբազանը ինք եւս ընդունեց իմ առած որոշումի արդարացիութիւնը:

Այստեղ կ'ուզեմ վերյիշել այն բացառիկ առիթները, երբ տարբեր ժամանակներու հանդիպեցայ Թորգոմ Սրբազանին եւ միշտ հիացայ սրբազանի ծառայական ըեանքի ու նուիրումի բացառիկ կեցուածքով: Միշտ պատրաստ, միշտ սկզբունքային, աւանդապաշտ ու կեանքով նուիրուած Ս. Էջմիածնին ու Երուսաղէմին: Իր սերն ու պաշտամունքը Կոմիտաս Վարդապետի նկատմամբ երբեք իրեն հաւասարը չունեցաւ: Կը բաւէր, որ պանծութիւն ունենար խօսելու Կոմիտասի մասին, անոր ստեղծագործական վաստակը ներբողելու, եւ արդէն Թորգոմ Սրբազանը կը տեսնէիք իր տարերքի մէջ:

Տարիներ յետոյ Թորգոմ Սրբազանին հանդիպեցայ Ս. Էջմիածին եւ վերջապէս Սուրբ Երուսաղէմ: Իր ավելոր տարիքին մէջ ան միշտ պահեց իր կենսունակութիւնը

Եւ արթնութիւնը: Շատերուն համար թերեւս մնաց անհասկանալի, բայց բոլոր անոնք, որ մօտեցան Թորգոմ Սրբազանին, իր մէջ գտան աւելի քան 70 տարիներու եկեղեցական ծառայութեամբ նուիրականացած հայ հոգեւորականը:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

1983 թուականի ամրանը, համալսարանն աւարտելէ յետոյ, կազմակերպեցի Լոնտոնահայ երիտասարդական առաջին ուխտագնացութիւնը դէպի Հայաստան: Գրեթէ բոլորն ալ ծնած էին Լոնտոն եւ իրենց առաջին այցը կը կատարէին Մայր Հայրենիք: Խանդավառ ուղեւորուեցանք Հայաստան եւ շուրջ երկշաբաթեայ ուխտագնացութիւնը իր որոշակի հետքը թողուց բոլորի վրայ: Թէեւ առաջին օրերը իրօք դժուար էին բոլորի համար միջավայրին համակերպուելու տեսակէտէն: Վեհափառի տնօրինութեամբ խումբը հաստատուեցաւ Բիւականի «Հայկաշէն» ամարանոցը եւ օրուայ ընթացքին նոյն տեղէն կը կազմակերպէինք Հայաստանի զանազան վայրերու ուխտագնացութիւնները: Մինչեւ օրս կը վերյիշեմ տպաւորիչ պատկերներ երիտասարդական ուխտագնացութենէն եւ դեռ շատերու հետ կապը կը մնայ հաստատ: Այստեղ ի մասնաւորի կը մտաբերեմ վերադարձի օրուան վաղ առաւօտեան Ս. Էջմիածին այցելութիւնը, ուր զանգակատան կանթեղի աղօտ լոյսի տակ բոլորով կատարեցին իրենց ուխտի աղօթքը ծնկաչոք: Եւ անտարակոյս աղօթական այդ պահը խորապէս դրոշմուեցաւ իւրաքանչիւրի սրտին մէջ առ այսօր եւ յաւիտեան:

Լոնտոնահայ երիտասարդական առաջին ուխտագնացութիւնը ինձ հաղորդեց մէկ հիմնական պատգամ մը, որ լաւագոյն միջոցը հայ երիտասարդը Մայր հայրենիքին կապելու՝ այդ ուխտի այցն է, որ հաւասար է 1000 քարոզի: Տարիներ յետոյ՝ 1993 թուականէն սկսեալ CYMA-ի (Կանատայի Հայ Երիտասարդաց Առաքելութիւն) անունին տակ երիտասարդական մասնայատուկ առաքելութիւն մը կազմակերպեցի Գանատայի Առաջնորդական շրջանիս, իւրաքանչիւր ամառ խումբ առ խումբ երիտասարդներ առաջնորդելով Հայաստան մասնայատուկ առաքելութեամբ: CYMA-ի մասնակից երիտա-

սարդներու թիւը անցաւ աւելի քան 700-ը, որոնք Հայաստանի մէջ իրականացուցին հոգեւոր ու մարդասիրական բնոյթի ծրագրեր: Բնական է, այս առաքելութեան մասին աւելի ուշ պիտի անդրադառնամ:

Այսու գրութեամբ կ'ուզէի միայն ընդգծել այն, որ Լոնտոնի մէջ սկիզբ առած առաքելութիւնը տարիներու վրայ ծաւալուեցաւ եւ ծնունդ տուաւ հրաշալի առաքելութեան մը:

ՇՐՋԱՆԱԴԱՐՏ ՕՔՍՖՈՐՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԷՆ

Յունիս 1983-ին աւարտեցի Օքսֆորտի համալսարանը Պսակաւոր Արուեստից տիտղոսով Աստուածաբանութեան մէջ, որուն աւելի ուշ յաջորդեց նաեւ Մագիստրոսի տիտղոսը:

Այդ օրերուն ուրախութիւնս անչափելի էր: Թէեւ մասնաւոր առիթ մը չէի ունեցած տօնախմբելու համար շրջանաւարտ ըլլալուս հանգամանքը: Շուտով վերադարձայ Ս. Էջմիածին եւ անհնար եղաւ անձամբ ներկայ գտնուելու վկայականաց բաշխման արարողութեանը:

Երեք տարիներու կեցութիւնս Օքսֆորտի Սուրբ Ստեփանոս գոլէճի մէջ իրօք բացառիկ փորձառութիւն մըն էր: Ուսումնառութիւնը մէկ կողմէն եւ շրջապատս միւս կողմէն իրօք մեծապէս նպաստեցին ինձ՝ ներքին աճ մը ապրելու եւ ամբարելու այնքան գիտութիւն եւ միաժամանակ ունենալու լայնախոհութիւնը ընդհանրապէս կեանքի նկատմամբ, միշտ պահելով սակայն աւանդապահ կեցուածքը Հայց. եկեղեցւոյ նկատմամբ:

Ս. Էջմիածնէն արտասահման ուսման մեկնողներէն շատ քիչերն էին, ովքեր վերադարձած էին վանք Ս. Էջմիածին: Հայկազուն Արք. Նաճարեան եւ նուաստս առաջիններէն էինք, որ ուսումնառութեան շրջանէն յետոյ պարտականութիւն համարեցինք վերադառնալ տուն: Եւ անկասկած տուն վերադարձը ունեցաւ իր լիարժէք իմաստն ու դերակատարութիւնը: Պատեհութիւնն ունեցանք աւելիով կապուելու Մայր Աթոռին, անոր գահակալին ու միաբանութեան:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՄԲ

1983-84 տարեշրջանին տարի մը մնացի Ս. Էջմիածին ուսուցչական պաշտօնով: Դասաւանդեցի Գեորգեան հոգեւոր ճեմարանի մէջ, եւ ինձ էր վստահուած հիմնականին մէջ երկու գլխաւոր առարկաներ. Հայց. եկեղեցւոյ պատմութիւն եւ եկեղեցական երաժշտութիւն, եւ այս երկուքին առընթեր՝ Էքումենիզմը եւ հայ եկեղեցին: Յիրաւի ինձ համար հաճելի պարտականութիւն մըն էր այս, եւ անոր առընթեր պատրաստեցի վարդապետական աւարտաճառս, նիւթ ունենալով «Ս. Խաչին նուիրուած ճառերը հայ ձեռագրաց մէջ»: Այս աշխատանքը առ այսօր հրապարակած չեմ եւ Աստուծոյ կամօք յառաջիկայ տարիներուն յուսալից եմ այն եւս հրապարակել: Սոյն աշխատանքին մէջ կատարած եմ ձեռագրերուն մէջ առկայ՝ Խաչին նուիրուած ճառերուն բնագրերու քննական բաղդատութիւնը: Աւարտաճառս աւարտելէն յետոյ պաշտպանութիւնս կատարեցի Յուլիս ամսուան ընթացքին եւ վարդապետական աստիճանը ստացայ ձեռամբ հոգելոյս Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս Սանթրեանի, օրուայ լուսարարապետը Մայր Տաճարի:

Այս ժամանակահատուածին պատեհութիւնը ունեցայ աւելի մօտիկէն ճանչնալու հոգելոյս Վազգէն Վեհափառին եւ բազում առիթներով վայելեցի մեծերու ներկայութիւնը վեհարան այցելութեանց ընթացքին, որոնց շարքին կրնամ վերյիշել բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեանը, արուեստագետ նկարիչ Գրիգոր Խանջեանը, Փրոֆ. Վարազդատ Յարութիւնեանը, վարչապետ Ֆադեյ Սարգիսեանը, Գեորգ Էմինը եւ դեռ շատեր, որոնք իրօք խոր տպաւորութիւն թողուցին իմ վրայ: Բոլորն ալ կը վայելէին ժողովուրդին բացարձակ համակրանքն ու յարգանքը:

Նոյն ժամանակահատուածին ձեռարկեցի Երեւան ուսանող արտասահմանեան քաղաքացի հայ ուսանողներու պարբերական հանդիպումները Վեհափառի հետ, որն աւելի ուշ արգելակուեցաւ օրուայ իշխանութեան կողմէ:

Նոյն այս շրջանին հետ կապուած բազում յուշեր կան, որոնց դժուար է անդրադառնալ սեղմ էջերու մէջ: Այնուամենայնիւ ժամանակի ընթացքին մեծ հաւանականութեամբ գրառումներ կը կատարեմ դեռ շատերու մասին:

ԱՊՐԻԼ 1984. ԱԻԱԳ ՇԱԲԱԹԸ ՊԱՂՏԱՏ

Հովուական իմ կեանքի մեջ առանձնայատուկ տեղ կը գրաւէ Ապրիլ 1984-ին Պաղտատ իմ այցելութիւնը Աւագ Շաբաթուայ արարողութիւններու կապակցութեամբ: Իւրովի փորձառութիւն մըն էր սա ինձ համար՝ հրաւերը Աւագ Արք. Ասատուրեանի կողմէ: Ամբողջ ամիս մը մնացի Պաղտատ եւ ջերմօրէն հիւրասիրուեցի համայնքին կողմէ: Ինձ համար խիստ տպաւորիչ էր իրաքահայութեան մօտ տեսնել ջերմ եկեղեցասիրութիւն եւ յարգանք հայ հոգեւորականին նկատմամբ, մասնաւորաբար կը յիշեմ օրուայ գաղութին ականաւոր դէմքերէն Տօքթ. Հասրաթը եւ շատեր: Վաղը պիտի կատարեմ նաեւ թաղման արարողութիւնը այդ օրերու պատասխանատուներէն Տիար Հայկ Պոսթանեանին, որուն անձամբ ճանչցայ եւ առիթով մըն ալ հիւրընկալուեցայ իր բնակարանէն ներս:

Պաղտատ իմ այցելութիւնը ունեցաւ իր բարերար դերակատարութիւնը եւ երկար տարիներու սառը յարաբերութիւնները Մայր Աթոռի եւ երկրի միջեւ անցան պատմութեան էջերու մէջ, եւ յետ այնորիկ Պաղտատ այցելութիւնները շարունակուեցան միաբան վարդապետներու կողմէ: Այստեղ իր բարերար դերակատարութիւնը ունեցաւ Առաջնորդ սրբազանը:

Համայնքը Թէեւ իր տարողութեամբ աւելի փոքր էր, բաղդատաբար արեւելքի այլ վիճակներու, բայց ներքին համերաշխութիւնն ու սերտ համագործակցութիւնը բոլորի մօտ ակնյայտ էր՝ եկեղեցին ունենալով որպէս գլուխը բոլորին: Մէկ ամսուայ իմ այցելութեան ընթացքին պատեհութիւնն ունեցայ հանդիպումներ կազմակերպելու համայնքի գրեթէ բոլոր կազմակերպութիւններուն հետ եւ ի մասնաւորի Առաջնորդ սրբազանի ուղեկցութեամբ հանդիպելու քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներուն հետ: Անկեղծօրէն, այնքան երիտա-

սարդ էի այդ օրերուն, որ ինձ համար անհասկնալի էր այդ բոլորին նպատակը: Տարիներ յետոյ Առաջնորդ սրբազանը տակաւին կը շեշտէր կարեւորութիւնը Ս. Էջմիածնէն միաբանի մը այցին, նպատակը եւ արդիւնքը: Այս բոլորին մէջ իմ յիշողութեան մէջ անջնջելի մնաց իրաքահայութեան աղօթանուէր կեանքին առկայութիւնը:

ԹՈՐՈՆԹՕ 1984

Պաղտատեն Թորոնթո վերադարձին ինձ կը սպասեր անակնկալը: Վեհափառի տնօրինութեամբ կը նշանակուէի Թորոնթոյի հայ համայնքին հովիւր, խնդրանքովը հոգելոյս Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեանին, որն այնուհետեւ ընտրուեցաւ որպէս Թեմի Անդրանիկ Առաջնորդը:

Օգոստոս 3-ին կը ժամանեմ Թորոնթո՝ ինձ համար բոլորովին անծանօթ քաղաք մը: Ինձ կը վստահուի հովուական պաշտօնը համայնքի մը, որ աւելի քան տասնամեակ մը ներքին պայքարներու բովէն էր անցած: Այսօրուան պէս կը յիշեմ իմ հովուական կեանքի ամբողջ ընթացքը եւ բոլոր անոնք, որոնց հետ աւելի ուշ գործակցութեան առիթն ունեցայ: Կրնամ հաստատապէս արձանագրել, որ համայնքը քարոքանդ էր եղած եւ ջանադիր աշխատանքով իմ ամբողջ ներուժը դրի հովուական ծառայութեան մէջ՝ վերամիաւորելու համար համայնքը եւ եկեղեցական կեանքը աշխուժացնելու:

Թորոնթո իմ հովուական կեանքի տարիները դարձան իրօք փառքի շրջան մը: Ինչքան յիշատակներ են կապուած համայնքին հետ: Իմ կապը մնաց շատ սերտ ընտանիքներու հետ, եւ ի մասնաւորի երիտասարդութեան հետ: Այդ օրերուն համայնքէն ներս երիտասարդական համախմբումները, դպրոցական կեանքը եւ բազում ծրագրերը, բոլորն ալ աննախընթաց յաջողութեամբ պսակուեցան, եւ համայնքը կենսաւորուեց եւ արմատները գորացան այնքան, որ յետագայ տարիներուն կարելի դարձաւ նոյն արմատներուն վրայ նոր «յարկ»եր բարձրացնել: Իրօք, ամբողջ էջեր են պետք արձանագրելու համար յուշերս: Մինչեւ այսօր անուանապէս կը յիշեմ բոլորը եւ գուցէ արդար պիտի ըլլայ անուններու արձանագրութիւն չկատարել: Կ'ուզեմ միայն իմ երախտագիտութիւնը յայտնել անխտիր բոլորին, որոնք իրենց անվերապահ սիրովը իմ մէջ խմորեցին հայ հոգեւորականը: Շատեր կ'ապրին այսօր, անոնց զաւակները արդէն ընտանիքներ են կազմած: Իսկ այս կեանքէն բաժնուած հոգիներու առջեւ իմ աղօթքն ու խոնարհումը կը բերեմ:

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ ՆՈՐ ԿԱՌՈՅՑԸ

Կիրակի, 17 նոյեմբերին, հոգելոյս Վազգէն Ա. Վեհափառի ձեռամբ օծուեցաւ նորակառոյց Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցին: Համայնքին հետ միասին կառուցեցինք նոր եկեղեցին: Հազարումէկ միջոցներու ու ձեռնարկներու դիմեցինք գոյացնելու համար համապատասխան գումարը: Այսօրուան պէս կը յիշեմ, թէ ինչպէս գանձանակ մը մեր ձեռքերու մէջ տուն առ տուն դարձանք երիտասարդներու հետ միասին կաթիլները քով-քովի բերելու համար կարելորդ նուէրներ կազմելու:

Վեհափառի հովուապետական այցին մեծագոյն նուէրն էր Ս. Երրորդութեան Հայց. Առաքելական եկեղեցին, որուն օծումը ինք կատարեց եւ օրհնեց որպէս մանրակերտը հայրենիքի ու Ս. Էջմիածնի: Բարեբախտութիւն է, որ այդ բոլորը որպէս պատմական արխիւ պահպանուած են տեսերիզներով: Ինչքան դժուար է այդ բոլորին անդրադառնալ, ոչ թէ որովհետեւ յիշողութեան դժուարութիւն ունիմ, այլ պարզապէս չափտի ուզէի հին օրերու յոյզերը իմ մէջ արթնցնել: Այդ բոլորը կը մնան իմ հոգու մէջ որպէս անկողոյստելի գանձ: Երախտապարտ եմ բոլորին անխտիր, հոգելոյս Վազգէն Արք. Քէշիշեանին եւ բոլոր ղեկավարներուն, որոնց շարքին մասնաշատուկ կերպով կ'ուզեմ յիշել Ժագ Ստեփանեանը, որպէս օրուան ծիսականի Ատենապետ, եւ Պօղոս Իշխանեանը՝ շինարարութեան ընդհանուր Ատենապետ, Արա Պօյաճեանը, որպէս շինութեան գործադիր պատասխանատու ճարտարապետ, Թագուր Յոբեանը եւ դեռ շատ երկար է ցուցակը բոլոր անոնց, որոնք հոգի ու տեսիլք հաղորդեցին բոլորին անխտիր:

Երեւի ասելի արդար պիտի ըլլայ, որ այդ օրերու վկայք իրենք խօսին եւ հաստատումը կատարեն, թէ ինչպիսի ճանապարհ կտրեցինք միասին՝ տեսիլքը նոր եկեղեցիին կեանքի վերածելու համար: Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ կառուցման նուիրահաւաքն իրականացաւ մեր հովութեան շրջանին եւ պարտամուրհակի շիջման արարողութիւնը կատարեցինք ասելի խորհրդանշական արարողութեամբ մը:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, 1988 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Երեւի իմ կեանքի ամենէն ցնցող պատկերները ես տեսայ երկրաշարժի եւ անոր յաջորդող տարիներուն: Մարդուն բանականութիւնը դժուար թէ կարողանայ ըմբռնել այն, ինչ կատարուեցաւ Դեկտեմբեր 7, 1988 թուականին եւ տակաւին անոր պատճառած ծանր հետեւանքները: Իմ յաճախակի այցելութիւններու ընթացքին միշտ ալ ծանր սրտով եմ վերադարձած Կիւմրիէն: Անցան աւելի քան 30 տարիներ եւ տակաւին հետքերն այնտեղ են, վերքը կը կտտայ: Մերունդներ են ծնուած, բայց կարծէք երկրաշարժին ցաւով ծնուած ըլլան: Մեր ժողովուրդը հաւատարիմ մնաց հայրենակերտումի իր կոչումին, եւ այսօր Կիւմրին ոտքի է կանգնած եւ կը շարունակէ վերագտնել իր հին օրերու փառքը:

Այդ տարիներուն բազում ծրագրեր իրագործուեցան երկրաշարժի գօտիին մէջ Գանատահայոց Թեմի կողմէ: Գուցէ ամենէն յատկանշականն է որբերու խնամատարութիւնը: Ժամանակ կար, որ Թեմի կողմէ գործող յանձնախումբերու կազմութեամբ, որուն ատենապետութիւնը յանձն էր առած տիկին Մատլէն Տեօվլէթեանը, կը խնամատարէինք աւելի քան հազար երկու հարիւր որբեր: Յանձնախումբերը բազում այցելութիւններով կը կատարէին յատկացեալ գումարներու յանձնումը: Տիկինները բացառիկ ջանադիր աշխատանքով կը կատարէին այս առաքելութիւնը: Սա արդէն ինքնին արձանագրուած մեծագոյն յանձնառութիւն մըն էր:

Որբերու խնամատարութեան աշխատանքին առընթեր իրականացուցինք այլ կարեւոր ծրագրեր եւս, որոնց շարքին է Արթիկի հիւանդանոցին կից ծննդատունը, Շանթ Պասմաճեանի յիշատակին ձօնուած դպրոցի մը վերակառուցումը եւ դեռ բազում ծրագրեր, որոնք իրօք ովկիանոսի մը չափ կարիքներուն դիմաց կաթիլ մըն էին միայն:

Ինձ համար ամենէն սարսափազդու պահը դարձաւ տարիներ յետոյ Սպիտակի գերեզմանատան այցը, Երկուշաբթի, 8 Հոկտեմբերին, երբ աղօթքի պահուն նշմարեցի համատարած 7 Դեկտեմբերի, 1988 թուի արձանագրութիւնը:

Կ'ուզեմ միայն խրոխտ պատգամով աւարտել խօսքս եւ ըսել, պիտի ապրի ու զօրանայ Հայաստանը:

Բ. ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Մայիս 26, 1990 տեղի ունեցավ Գանատահայոց Թեմի Պատգամաւորական ժողովը եւ առաջնորդական ընտրութիւնները: Առաջնորդական ընտրութեամբ ինձ վիճակուեցաւ դառնալ Թեմի Բ. Առաջնորդը: Իրօք, այժմ, որ յետադարձ ակնարկ մը կը նետեմ, կ'անդրադառնամ, որ նման պատասխանատու պաշտօնի մը համար չափէն աւելի երիտասարդ էի: Աշխատանքն ու ծառայութիւնը լաւ է անշուշտ, մանաւանդ հոգեւորականին համար, բայց որոշակի տարիքն ու փորձառութիւնը առաւել արդիւնաւոր կը դարձնեն հոգեւոր ծառայութիւնը: Յետադարձ ակնարկ մը նետելով անցնող տարիներուն վրայ՝ որոշապէս կրնամ առողջ վերլուծում մը կատարել եւ զատորոշել գնահատելին ու թերիները, որոնք արձանագրեցի ծառայութեան ընթացքին:

Առաջնորդի մը ծառայական կեանքի մեծագոյն յաջողութիւնը կ'արձանագրուի լսելու կարողութեան մէջ: Վիճակները լաւագոյնս հասկնալու եւ համապատասխան լուծումներ տալու համար պէտք է լսել ու մտիկ ընել: Եւ անշուշտ այդ յատկութիւնը անձին մէջ կը զարգանայ նաեւ տարիներու փորձով: Եղան բազում առիթներ, երբ շատ արագ եմ արտայայտուած կամ գործած, եւ սակայն ժամանակ անցած որոշապէս անդրադարձած եմ այն բանին, որ համբերութիւնը մեզ կ'առաջնորդէ լաւագոյն լուծումներուն:

Մայիս 26, 1990-ին իմ կեանքին մէջ հաստատուեցաւ նոր հանգրուան մը: Աղօթքս կատարեցի եւ ճանապարհս շարունակեցի միշտ այն խոստումով, որ խոնարհ ծառայութիւնս ինձ պիտի առաջնորդէ դէպի սպասուած յաջողութիւնները: Թէ ինչպէս եղաւ Գանատահայոց Թեմէն ներս ծառայութեանս շրջանը, այդ ալ կը թողում Աստուծոյ արդար դատաստանին, որովհետեւ ճշմարիտը Աստուծոյ խօսքն է:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՕԾՈՒՄ
ԿԻՐԱԿԻ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 1990

Գանատահայոց Թեմի Պատգամաւորական ժողովի խնդրանքին ընդառաջ հոգելոյս Վազգէն Ա. Սրբազնագոյն կաթողիկոսի ձեռամբ Կիրակի, 7 Հոկտեմբերին եպիսկոպոսական ձեռնադրում եւ օծում ստացայ Ս. Էջմիածնի Աւագ խորանին վրայ: Իրօք պատմական աննախընթաց օր մըն էր 7 Հոկտեմբերը: Որպէս օծակից ունեցայ Գերշ. Գիսակ Արք. Մուրատեան, Խաժակ Արք. Պարսամեան եւ Յակոբ Արք. Գըլընճեան սրբազանները: Յաւարտ սուրբ պատարագին՝ Մայր Տաճարի շրջափակին մէջ հաւաքուած հազարաւոր ուխտաւորներու ներկայութիւնն իրօք պարտաւորեցնող էր, որ կեանքի այս նոր հանգրուանը եւս վերապրէի հոգեւորականի կոչումիս նորոգութեամբը: Հոգեւոր սպասաւորութեան բոլոր հանգրուաններուն իւրաքանչիւր ձեռնադրութիւն, որ ստացայ, ինձ համար դարձաւ մարտահրաւէրը նորոգեալ կեանքին՝ նորոգեալ ուխտով կեանքը շարունակելու:

Ինձ համար մեծագոյն պարգէւ էր ինչպէս քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը, այնպէս ալ եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում ստանալը հոգելոյս Վազգէն Վեհափառի ձեռամբ: 30 տարիներ են անցած, եւ առ այսօր իմ ճակատիս վրայ կարծէք դեռ իր սրբալոյս միտոնով դրոշմուած բութին հպումը կը զգամ: Արդարեւ, իր հոգեւոր ներկայութիւնը զգալը մեծագոյն պարգէւ է, քանզի ամեն անգամ, երբ կը խօսիմ իր մասին կամ կը մտաբերեմ հին օրերու յուշերը, ապա կարծէք զգաստութեան պահը կ'ապրիմ:

Ուրախութիւն էր ինձ համար այդ օրը՝ ձեռնադրութեան եւ օծման արարողութեան ընթացքին վայելել մօրս ներկայութիւնը: Այնպիսի պահեր են այս բոլորը, որոնք իրապէս կը մնան անջնջելի մեր յիշողութեանը մէջ:

Ահաւասիկ քայլ մը եւս իմ կեանքին մէջ, որն ինձ պարտաւորեցուց մնալու խոնարհ:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳ ԿԻՐԱԿԻ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

Եպիսկոպոսական անդրանիկ պատարագը Թեմեն ներս մատուցեցի Կիրակի, 14 Հոկտեմբերին, Թորոնթոյի Սուրբ Երրորդութիւն Հայց. եկեղեցւոյ մէջ: Անշուշտ մօտեցումը սխալ էր, եւ Թեմեն ներս անդրանիկ պատարագը պետք էի մատուցել Մոնթրէալ, Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ, բայց ներկայիս կը դժուարանամ յիշել, թէ ի՞նչ էին պայմանները այս մօտեցումին: Հաւանաբար միայն այն հանգամանքը, որ նախկին հովիւն էի Ս. Երրորդութիւն Հայց. եկեղեցւոյ եւ տեսակետով մը աւելի հարազատ կապ կը զգայի համայնքին հետ:

Ս. Պատարագը ստեղծեց խանդավառ մթնոլորտ մը, եւ ժողովուրդին ուրախութիւնը առաւել ամրացուց իմ մէջ հոգեւոր եռանդն ու ուժը՝ անցնելու ծառայութեան նոր մակարդակի մը: Այսօրուան պէս կը զգամ, որ այդ օրերուն չափազանց զգացմունքային էի իմ աշխատելաձեւիս մէջ որպէս նորընտիր առաջնորդ եւ նորած եպիսկոպոս: Բայց հետզհետէ եւ համեմատաբար կարճ ժամանակահատուածի մը մէջ փորձառութիւններ ձեռք ձգեցի եւ երախտապարտ եմ շատերուն, ովքեր միշտ կողքիս մնացին եւ իրենց զօրակցութեամբ միայն նպաստեցին, որ իմ մտածումներուն ու աշխատանքային մօտեցումներուն մէջ ըլլամ հետամուտ ու համբերատար: Յետագային այդպէս ալ եղաւ: Հետեւաբար բոլոր անոնք, ովքեր իմ կողքիս մնացին, պետք է ունենան հոգեկան ներքին խաղաղութիւն եւ գոհունակութիւն, որ իրենք եւս մաս ու բաժին ունեցան առաջնորդութեան մէջ:

ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԸ

Գանատահայոց Թեմը պաշտօնապես հաստատուեցաւ 1984 թուականի աշնան, հոգելոյս Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով: Յիշողութեանս մէջ թարմ է, թէ ինչպէս օրին, երբ Թեմը տակաւին կը գտնուէր Արեւելեան Թեմի հովանաւորութեան ներքոյ, հոգելոյս Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի նախագահութեամբ գումարուեցաւ Պատգամաւորական ժողովը Ս. Քերթինգի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. եկեղեցւոյ մէջ եւ Թեմի որպէս Անդրանիկ Առաջնորդ ընտրուեցաւ հոգելոյս Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեանը, որն այնուհետեւ մեկնեցաւ Ս. Էջմիածին եւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում ստացաւ ձեռամբ Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսին:

Թեմի կեանքն այդ օրերուն իրօք չափազաց անփառունակ էր: Թեմէն ներս կը գործէինք ընդամենը 2 հոգեւորականներ՝ հանգուցեալ Տ. Բարթող Ա. Բենի. Խրքաճեանը, հոգեւոր հովիւը Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ, եւ նուաստս՝ նորանշանակ հովիւը Ս. Երրորդութիւն Հայց. եկեղեցւոյ: Քիչ ժամանակ անց Թեմակալ առաջնորդը կատարեց 3 նոր հոգեւորականներու քահանայական ձեռնադրութիւնը եւ ապահովեց մի քանի նոր ծովներու հովիւներու նշանակումը:

Առաջնորդ սրբազան հօր առողջական վիճակը երբեք առիթ չտուաւ, որ ան կարողանար լիարժէք իր ծառայութիւնը բերէր: Ան իր նկարագրով բացառիկ կերպով նուիրուած էր Մայր Աթոռին, հարուստ էր մտաւորական կարողութիւններով եւ հմուտ քարոզիչ էր: Երախտապարտ եմ հոգելոյս Վազգէն սրբազանին, որ իմ առաջ բացաւ հովուական ծառայութեան դաշտը, եւ իր ուղղութիւններով շատ կարճ ժամանակահատուածի մը մէջ ահագին փորձութիւն ձեռք բերի: Օրին իմ յուշերուս մէջ իմ սրտի խօսքն ուղղած եմ իր բարի յիշատակին: Սրբազանը իր հոգին աւանդեց Մարտ 26, 1990 թուականին, Կ. Պոլսէն վերադարձին, ուր ներկայ էր գտնուած երջանկայիշատակ Շնորհք Պատրիարքին վերջին օժման եւ յուղարկաւորութեան արարողութեանը:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քահանայից ձեռնադրությունները սկսայ կատարել նախ Գանատահայոց Թեմէն ներս եւ ապա այդ շարունակեցի եւ՝ Ս. Էջմիածնի մէջ, եւ՝ Արեւմտեան թեմի տարածքին: Եւ ամէն անգամ ձեռնադրութիւն կատարելով՝ թեկնածուի հետ հոգեւոր վերածնունդի պահը ունեցայ եւ: Ստորեւ կը ներկայացնեմ ցանկը ձեռնադրեալ քահանայից, որոնք իրենց ծառայութիւնը կը շարունակեն մեր սուրբ եկեղեցւոյ մէջ: Քիչերու պարագային արձանագրուած են կացութիւններ, որոնց համար խորապէս կը ցաւիմ եւ աղօթող եմ, որ ժամանակի ընթացքին յուսալից լուծումներ պիտի ըլլան:

Ձեռնադրություններ ի Ս. Էջմիածին. Հ. Գարեգին, Հ. Գեղարդ, Հ. Մամբրէ, Տ. Ռուբէն, Տ. Վահրամ, Տ. Պարոյր, Տ. Խոսրով, Տ. Ժիրայր, Տ. Առաքել, Տ. Եփրեմ, Հ. Յարութիւն, Տ. Հովել, Տ. Վիգէն, Տ. Սողոմոն, Հ. Մաղաքիա, Տ. Արմաշ, Տ. Սիփիան, Տ. Արամ, Տ. Մանուկ:

Ձեռնադրություններ Արեւմտեան թեմի. Տ. Խաժակ, Տ. Աւետիս, Տ. Ներսէս, Տ. Տիրան, Տ. Գրիգոր, Տ. Մեսրոպ, Տ. Սերովբէ, Տ. Եղիշէ:

Ձեռնադրություններ Գանատահայոց Թեմի. Տ. Չարեհ, Տ. Շնորհք, Տ. Կոմիտաս, Տ. Նարեկ, Տ. Վազգէն:

Քահանայական ձեռնադրություններու շարքին կատարեցի աւելի քան հարիւր սարկաւազներու ձեռնադրություններ, որոնց գրեթէ մեծամասնութիւնը իրենց ծառայութիւնը առ այսօր կը բերեն եկեղեցւոյ մէջ: Իսկ դպրաց ձեռնադրություններ անհամեմատօրէն շատ են: Վերջինի պարագային կը դժուարանամ ըսել, թէ անոնցմէ ովքեր իրենց ծառայութիւնը կը շարունակեն մեր սուրբ խորաններուն վրայ:

Ձեռնադրությունները եկեղեցւոյ կեանքին մէջ խիստ տպաւորիչ են: Իւրաքանչիւր համայնքի մէջ կատարուած ձեռնադրութիւնը առաւել եւս կ'ամրապնդէ հաւատացելոց աղօթանուէր կեանքը, որովհետեւ ինչքան թեկ-

նածուն կ'ունենայ հոգեւոր կեանքի վերածնունդը, ապա նոյնքան եւս եկեղեցւոյ հաւատացեալները կը սերտացնեն իրենց կապը Աստուծոյ եւ եկեղեցիին հետ:

Բոլորս ալ քաջ գիտենք, որ ձեռնադրութիւնը տուեալ անձին մէջ հոգեգալստեան պահն է, երբ Ս. Հոգւոյ շնորհներով ենթական կը լեցուի եւ կը հարստանայ, իր կեանքով կը դառնայ առաքեալ Քրիստոսի եկեղեցւոյ:

Իմ աղօթքը կը բարձրացնեմ առ Աստուած անխտիր բոլորի համար, որպէսզի մնան հաստատ իրենց կոչմանը մէջ:

ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Գանատահայոց Թեմէն ներս նոր համայնքներու ծնունդը իրօք դարձաւ նշանակալից: Այսօրուան պէս կը յիշեմ, թէ ինչպէս նուիրումով ու հազարումէկ փորձութիւններով ստեղծեցի համայնքներ հայահոծ շրջաններէ հեռու քաղաքներու մէջ՝ սկսելով Գանատայի արեւելքէն մինչեւ արեւմուտք տարածքին: Յաճախ առանձինն կատարեցի ամբողջ պատարագները՝ իւրաքանչիւր վիճակի մէջ բով-բովի բերելով ցրուած բեկորները հայերուն: Նովա Սքոթա, Քեպէք Սիթի, Պրոսսար, Լավալ, Եոլոնայֆ, Ուինիբեկ, Էտմընտըն, Գալկըրի, Ուինտաբըր եւ Միսիսոկա քաղաքներու մէջ հաստատեցի ծխական վիճակներ, եւ Աստուած գիտէ միայն, թէ ինչպիսի պայմաններու մէջ այդ բոլորին հանդէպ ցուցաբերեցի մասնայատուկ հոգածութիւն: Ինձ համար ցաւ է լսել, թէ կատարուած աշխատանքը շատ տեղերու մէջ չշարունակուեցաւ: Եւ չեմ ուզեր անելիով անդրադառնալ իրավիճակին եւ ոչ ալ պատճառները փնտռել:

Համայնքներու կազմութիւնը կը պահանջէ լուրջ եւ հետեւողական աշխատանք: Միշտ նկատի պէտք է ունենալ այն հանգամանքը, որ ժողովուրդը կաւի նման է, եւ անոր պէտք է ձեւ ու կերպ տալ աղօթքով ու երկիւղածութեամբ: Իմ առաքելութեան նկատմամբ այնքան ուշադիր էի, որ իմ հարազատ հօր թաղման արարողութիւններուն ներկայ ըլլալու իրաւունքէս քիչ մնաց, որ զրկուէի պարգապէս անոր համար, որ Եոլոնայֆի համայնքի առաջին այցը համընկնեցաւ գրեթէ օր մը առաջ: Այցելութեան յաջորդ օր միայն մէկ միջոց կար ինձ համար, եւ այն ալ բեռնատար ինքնաթիռով եւ կանգառներով հասնելու Լոս Անճելըս: Եւ որպէսզի վաղ առաւօտեան թռիչքս ապահովէի, ամբողջ գիշերը նախընտրեցի մնալ հիւրանոցի սպասման սրահին մէջ, որպէսզի անակնկալ մը չպատահէր: Այդ ամբողջ գիշերը ես գիտեմ, թէ ինչպիսի անձկութեան պահեր ունեցայ:

Այս տողերը արձանագրելով՝ իմ մէջ կը նորոգուի ցաւը, բայց կը թողում, որ Աստուած ինք իր լուծումը տայ այն վիճակին, որուն համար ես կը նախընտրեմ լուռ մնալ:

ԳՐԱԿԱՆ-ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երբեք հաւակնութիւն չեմ ունեցած, եւ այսօր ալ նոյնն է պարագան, թէ գրող մըն եմ: Առաջնորդական պաշտօն ստանձնելէ առաջ սկսայ ինձ համար հաճելի ձեռնարկ դարձնել հրատարակութիւններս: Դեռ վարդապետական տարիներէս սկսայ համեստ հրատարակութիւններ լոյս ընծայել: 1989 թուականին հրապարակեցի Ծայրագոյն վարդապետականի աւարտաճառս, որպէս ղեկավար ունենալով լուսահոգիներ Փայլակ Այնթապլեանն ու Երուանդ Մելքոնեանը: Եւ անոր յաջորդեցին մէկը միւսին ետեւէն հրատարակութիւններս, որոնք Առաջնորդարանի կայքէջին են դրուած: Իմ հեղինակութեամբ հրապարակուած գիրքերուն հետ մէկտեղ Առաջնորդարաններու մէջ առ այսօր հրապարակուած են հազարի հասնող գրքոյկներ ու գիրքեր, որոնց մէջ գրեթէ հարիւրը կը կրեն իմ ստորագրութիւնը:

Իմ գրական ստեղծագործական երկերը բազմաժանր են: Անոնց շարքին ունիմ Քարոզգիրքեր, Յուշեր, Աղօթագիրքեր, Խոյնումներ, Մանրապատումներ, որոնց շարքին ոմանք հրապարակուած են երկլեզու՝ հայերէն-անգլերէն:

Իրապէս ինձ համար չափազանց սիրելի է այս աշխատանքը, եւ սոյն գրքոյկին պիտի կցեմ նաեւ բոլոր գիրքերու ցուցակը: Այնտեղ արձանագրած չեմ միայն յառաջիկային ձեռնարկուելիք Վազգէն Վեհափառին յղեալ իմ նամականին եւ տակաւին այլ ձեռնարկներ:

Միշտ պիտի յիշեմ Երախտագետ սրտով Գարեգին Ա.-ի կարեւոր մէկ խօսքը. «Գիրքը՝ ամենէն երկարակեացն է»: Գիրքի հանդէպ իր չափ սեր ու հետաքրքրութիւն շատ քիչերն են ունեցած: Երախտապարտ եմ նաեւ բոլոր անոնց, ովքեր եղան իմ գիրքերու հովանաւորները եւ արժէ նաեւ օր մը բոլորի անուանացուցակը հրապարակել:

Ինչ որ փորձեցի եւ տակաւին պիտի շարունակեմ դեռ շատ քիչ է, որ ինքզինքիս իրաւունքը տամ ըսելու, որ գուցէ օր մը գրող դառնամ:

ԵՐՈՒՍԱՂԷՍ ԱՌԱՋԻՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆՍ

Երուսաղէմ իմ առաջին այցելութիւնը կատարեցի Թորգոմ Պատրիարքի գահակալութեան առիթով: Յիշարժան էր իմ առաջին այցը, որովհետեւ միշտ ալ երազս էր եղած ուխտի այցը կատարել ու. Եղուսաղէմ, ուր գրեթէ հարիւր տարիներ առաջ իմ ընտանիքս ունեցած էր արմատներ՝ յանձին Երեմիա Արքեպիսկոպոս Տէր Սահակեանի, որ շրջանի մը համար վարած էր պատրիարքական տեղապահի պաշտօնը եւ վախճանած 1900 թուականի Յունուարի 7-ին: Այս առիթով իմ աղօթքը կատարեցի իր շիրիմին եւ աղօթքի պահուն ինձ հանդիպեցաւ հանգուցեալ Կիւրեղ Արքեպիսկոպոս Գաբիկեանը, բառին լման առումով պահապանը սուրբ տեղեաց: Աղօթքէ յետոյ ինձ հրաւիրեց իր սենեակը, ուր ինձ փոխանցեց Երեմիա Արքեպիսկոպոսի առաջնորդական ասայի գլուխը, որուն վրայ արձանագրուած էր Երեմիա վարդապետ, Առաջնորդ Խարբերդի: Երեմիա սրբազան եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ստացած էր 1868 թուականին Գեորգ Դ. Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ եւ իրեն որպէս օծակից էր ունեցած Մկրտիչ Խրիմեան Հայրիկը: Հայոց Երուսաղէմը հայ քրիստոնեայի հաւատքի կեանքին հիմնաքարերէն մէկն է Ս. Էջմիածնէն յետոյ: Ս. Երուսաղէմ ուխտի այցելութիւնը իմ մէջ առաւել եւս արմատացուց սերը մեր ու եկեղեցւոյ հանդէպ: Թորգոմ Պատրիարքի հետ ըլլալը հոգեկան մեծ գոհունակութիւն տուաւ ինձ, որովհետեւ իր մէջ տեսայ անքակտելի կապը հայոց Երուսաղէմի հետ:

Սեղմ Էջերու մէջ կարելի չէ ամփոփել Երուսաղէմ իմ առաջին ուխտագնացութեան յուշերը, Իմ հոգու ծալքերուն մէջ կան բազում քաղցր յուշեր, որոնք անտարակոյս առիթով մը պիտի թուղթին յանձնեմ: Այստեղ կ'ուզեմ իմ գիրն աւարտել՝ անդրադառնալով հայ մշակոյթի վաւերական ռահվիրայ՝ Նորայր Արքեպիսկոպոս Պողարեանի

հետ իմ հանդիպմանը: Խոնարհագոյն անձ մը, որ իր փոքր կազմով թաղուած էր գիրքերու աշխարհին մէջ եւ ի շարս բազում աշխատութեանց, որպէս ժառանգ է թողած Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց «Մայր Տուցակ ձեռագրացը»:

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱԲԱԹԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Հանգուցեալ Վազգէն Ա. Ամենայն հայոց կաթողիկոսի արտօնութեամբ 1988 թուականի Ղարաբաղեան շարժման առաջին ժողովրդական հաւաքի օրը սկիզբը դրուեցաւ Ս. Էջմիածնի Միաբանական ժողովին, որուն նախաձեռնողի ու կազմակերպիչի յանձնառութիւնը առի: Միաբանական ընդհանուր ժողովէն յետոյ ունեցանք նաեւ պարբերական ժողովներ Երոպայի եւ Գանատայի մէջ, որոնց արձանագրութիւնները գրքոյկի ձեւով հրապարակուեցան: Այս մասին աւելի հանգամանալից անդրադարձած է դոկտ. Զաւէն Ա. Քինյ, Արզումանեան իր «Ազգապատում»ի մէջ որպէս շարունակութիւնը Օրմանեան Պատրիարքի «Ազգապատում»ին:

Միաբանական հաւաքը իր առաջին տարիներուն արձանագրեց խանդավառութիւն եւ առիթ տուաւ, որ եւ՛ Հայաստան, եւ՛ Սփիւռքի համայնքներու մէջ ստեղծուին մասնաւոր հանդիսութիւններ՝ առաւել համախմբելու համար հաւատացեալները: Յետագային Միաբանական հաւաքները որոշ ժամանակի մը համար ունեցան դադար մը, որուն պատճառները մեզ համար անշուշտ յստակ են: Բայց մեծ բարեբախտութիւն էր, որ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութեամբ Միաբանական հաւաքները վերահաստատուեցան եւ առ այսօր կը շարունակուին: Վստահաբար այս հաւաքները իրենց բարերար ազդեցութիւնը կ'ունենան եւ՛ միաբաններու անհատական կեանքի, եւ՛ ընդհանրապէս միաբանական կեանքին վրայ: Կը բաւէ, որ միաբանները միասնական աղօթքի պատեհութիւնը կ'ունենան, եւ անտարակոյս միմեանց մօտիկէն ճանչնալով կը զարգացնեն նաեւ միասնական աղօթքի ոգին:

Այս մասին ուզեցի արձանագրութիւն կատարել, որովհետեւ սա կարելոր տեղ կը գրաւէ իմ հոգեւոր կեանքին մէջ: Եւ իմ երախտագիտութիւնը բոլոր այն միաբանակից եղբայրներու, ովքեր այդ օրերուն մեծապէս զօրավիգ դարձան ինձ եւ հաւատացին Միաբանական հաւաքին առաքելութեան:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑԻ ԿԱԶՄԱԴՈՐՈՒՄԸ

Համազգային Հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության (ՀԵՀԵՄ) շարժումը իր առաջին համեստ քայլերը սկսաւ առնել դեռեւս 1700-ամեակի տօնակատարութեան առաջին օրերուն: Ան աւելի թափ առաւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութեամբ ու քաջալերանքովը: Ան իմ ամէն քայլափոխին ամբողջականօրէն հովանաւորեց առաքելութիւնը, եւ առաջին ու մեծագոյն երիտասարդական հաւաքը տեղի ունեցաւ Յուլիս, 2001-ի օրերուն, երբ աւելի քան երկու հազար երիտասարդներ համախմբուեցան Հայաստանի մէջ: Այդ օրերուն երիտասարդներու ներկայութիւնը Հայաստանի մէջ բացառիկ խանդավառութեան առիթ տուաւ: Արժէ, որ գէթ այս շարժման մասին առանձինն աշխատութիւն մը հրապարակուի, ցոյց տալու համար կատարուած աշխատանքին տարողութիւնն ու լրջութիւնը: Մինչեւ վերջերս շարունակեցինք մնալ ընդհանուր պատասխանատուն ՀԵՀԵՄ-ին, եւ տարիներու վրայ կուտակուած աշխատանքներու ու առաքելութեանց ամբողջութիւնը յուսալից ենք, որ հիմք պիտի ծառայէ, որ գալիք սերունդներ անոր վրայ պիտի աւելցնեն նոր յարկեր եւ առաւել արդիւնաւոր պիտի դարձնեն ՀԵՀԵՄ-ի առաքելութիւնը:

ՀԵՀԵՄ-ի կազմաւորման առաքելութեան մէջ արձանագրուած են անթիւ անհամար այցելութիւններ եւ՝ Հայաստանի թեմական կառոյցներուն, եւ՝ սփիւռքեան թեմերուն: Մենք գիտենք, թէ ինչպիսի դժուարութեանց առաջ գտնուեցանք այս ամբողջ ընթացքին, եւ սակայն, առանց ընկրկումի եւ առանց նոյնիսկ ունենալու միջոցները, կարելի եղաւ տարիներու վրայ ծաւալել երիտասարդական զանազան բնոյթի միջոցառումներ: Աղօթող եւ հաւատացող ենք, որ այս կարեւորագոյն հաստա-

տութիւնը հայ առաքելութեան մէջ կը շարունակէ իր գործունէութիւնը:

Յառաջիկային առանձինն գրքոյկներու նախաձեռնութեամբ պիտի անդրադառնանք ՀԵՀԵՄ-ին ու անցնող տարիներու ընթացքին կատարուած աշխատանքին ու գալիք ակնկալութեանց:

ՄԱՅԻՍ 3, 2003. ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

Ուրբաթ, Մայիսի 3, 2003 թուականին ընտրուեցայ Թեմակալ Առաջնորդ Հիսսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմին: Անկասկած իմ հոգեւոր կեանքի առաքելութեան մէջ վերջինս ինձ կը դնէր նոր մարտահրաւերներու առաջ, որպէսզի այս մեծ թեմական կառոյցին մէջ շարունակէի ծառայութիւնս: Ինչպէս միշտ, այս անգամ եւս ընդունեցի հրաւերը Աստուծմէ՝ խոնարհաբար իմ ծառայութիւնս շարունակելու համար Թեմէն ներս: Եւ իրօք առաջին օրէն լծուեցայ խանդավառ գործունեութեան եւ իմ շուրջ գտայ եւ միաժամանակ փնտռեցի նաեւ նոր ծառայողներ, ովքեր ջերմ ոգով իրենց ծառայութիւնը բերին: Ահա արդէն 17 տարիներէ ի վեր կը գտնուիմ Լոս Անճելըս, Առաջնորդական պաշտօնով եւ մարդկային կարողութեանս կարելի եղած չափով կը փորձեմ Թեմը, իր եկեղեցիներն ու առաքելութիւնը ծաղկեալ պահել: Հաւանաբար այս Թեմը, որպէս մեծագոյն Թեմերէն մէկը, իր թիւով եւ տարածուած շրջաններով, բարդ իրավիճակ մը կը ներկայացնէ:

Բարեբախտութիւնն այն է, որ Առաջնորդական իմ ընտրութենէն անմիջապէս յետոյ կարելի դարձաւ նոր հոգեւորականներու պատրաստութիւնն ու ձեռնադրութիւնները, ովքեր հովուական պաշտօններ ստանձնելով՝ իրենց ծուխերը օր առ օր կը զարգացնեն եւ միասնաբար կը զօրացնեն Թեմը, որպէս կարելոր բաղկացուցիչը Հայց. Առաքելական մեր Մայր ս. եկեղեցւոյ: Արեւմտեան Թեմը, մինչեւ 1927 թուականը իր ծուխերով մաս կը կազմէր թեմական մեծ կառոյցի մը, եւ անոր Առաջնորդը իր գործունեութիւնը կը ծաւալէր Արեւելեան ափէն: Տակաւին այդ օրերուն օրուայ Առաջնորդը կը համարուէր նաեւ Թեմակալը Հարաւային Ամերիկային ներառեալ:

Յաջորդող մի քանի ենթավերնագրերով պիտի փորձենք անդրադառնալ Արեւմտեան Թեմէն ներս անցնող 17 տարիներու ընթացքին կատարուած աշխատանաց, զորս իրօք հնարաւոր չէ ամփոփել:

ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Արեւմտեան Թեմի Առաջնորդական ընտրութիւնէն անմիջապէս յետոյ իմ առաջին պարտականութիւնը եղաւ հոգեւորականաց պատրաստութիւնն ու նոր եկեղեցիներու կառուցումը: Բնական է՝ Մայր Տաճարը՝ Ս. Ղեւոնդեանց անունով օծուած, դարձաւ պսակը բոլոր եկեղեցիներուն մէջ, որպէս Առաջնորդանիստ: Իսկ անոր հետ համատեղ ունեցանք եկեղեցական նոր կառոյցներ հետեւեալ շրջաններուն մէջ.

Ռանչօ Միրաժի Ս. Կարապետ եկեղեցի
Փասատինայի նորակառոյց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի

Արիզոնայի Ս. Աբգար եկեղեցի
Թահանկայի Սրբոց Առաքելոց եկեղեցի
Սանթա Քլարիթայի Ս. Սարգիս եկեղեցի
Լաս Վեկասի Ս. Կիրակոս եկեղեցի
Փորթլընտի Ս. Գեորգ եկեղեցի
Սիաթլի Ս. Յարութիւն եկեղեցի:

Ընթացքի մէջ է Սան Տիէկոյի նոր եկեղեցին եւ շուտով Սաքրամենթոյի նոր եկեղեցին: Ընթացքի մէջ են նաեւ այլ կառոյցներու շինարարական ծրագրերը: Եկեղեցական կառոյցներու հետ համատեղ հաստատեցինք նաեւ Mission Parish-ներ Mexico-ի, Ալպաքըրքի, Քոլորատոյի, Բըվըսայտի, Վենչուրա Քաունթիի եւ այլ տարածքներու մէջ, որոնք ունին իրենց այցելու հովիւները:

Այնուամենայնիւ, հոգեւորականաց պատրաստութիւնը կը շարունակէ մնալ ամենէն առաջնահերթ առաքելութիւնը, եւ փառք Աստուծոյ, սքանչելի հոգեւորականաց հոյլ մը իրենց նախանձնախնդիր ծառայութիւնը կը շարունակեն:

Թեմական որեւէ կառոյց ամուր է եւ հաստատուն իր հոգեւորականներով ու անոնց գործակից ծխական մարմիններով: Մեր երախտագիտութիւնը անխտիր բո-

լորին, ովքեր իրենց հրաշալի ծառայութիւններով գործնապէս ցոյց կու տան իրենց հաւատքի գիտակցութիւնը:

Այս մասին օրին անդրադարձած ենք մասնաւոր հաղորդագրութիւններով եւ՝ պարբերաբար, եւ՝ երբեմն զեկոյցներով: Ծառայութեան դաշտը ընդամակ է եւ դեռ շատ աշխատանք կայ կատարելիք, եւ Աստուծոյ կամօք ու հաւատքով պիտի շարունակենք մեզմէ սպասուածը ի կատար ածել:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԸ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջնորդական ընտրությունն էն յետոյ անյապաղ ձեռնարկեցինք նաեւ գրասենեակային աշխատանքներու եւ բաժանմունքներու վերակազմութեան: Այստեղ մասնաւոր կերպով կ'ուզենք արձանագրել մեր երախտագիտութիւնը այն թուով քիչ պաշտօնէից, ովքեր անձնուրաց ծառայած էին տարիներ շարունակ:

Ներկայիս Առաջնորդարանի հովանաւորութեանը ներքոյ կը գործեն նոր բաժանմունքներ, որոնք կը գործեն մեր գլխաւորութեամբ եւ անմիջական ղեկավարութեանը ներքոյ վարիչ Տնօրէն բարեշնորհ Յարութիւն Սրկ. Մարգարեանին:

Այս ենթավերնագիրը այնքան ընդարձակ է, որ երկու էջերու մէջ անհնար է անդրադառնալ բոլորին եւ իւրաքանչիւրի ծաւալած առաքելութեանը: Այս ուղղութեամբ օրին հրապարակեցինք առանձին գրքոյկ մը, ուր հնարաւորինս ներառած ենք բոլորը. Նայիլ “Who we are” գրքոյկը:

Որոշապէս նոր թափ ստացաւ վարչական կազմակերպութիւնը, հոգեւոր առաքելութիւնները եւ թեմական կառոյցներէն ներս գործող բոլոր կազմակերպութեանց հետ կազմակերպեալ կապը: Առաջնորդարանը ներկայիս, իր բոլոր ծառայութիւններով կը գործէ բազում ուղղութիւններով, եւ այս բոլորին մէջ ենք ներառած նաեւ հասարակական կեանքի մէջ գործող ոչ հայկական կազմակերպութիւնները եւս, ըլլան անոնք իրենց բնոյթով աշխարհիկ կամ եկեղեցական:

Գալով Մայր Հայաստանի եւ ի մասնաւորի Ս. Էջմիածնի հետ ձեռնարկուած ծրագրերուն, անոնց թիւը շատ է, եւ գրեթէ բոլորին անդրադարձած ենք օրին մեր շաբաթական հաղորդագրութիւններով: Ինչպէս այլ պարագաներու, այս ենթավերնագրերուն կարելի է անդրադառնալ էջերով ու մանրամասնութիւններով:

ՍԻՐՏՍ ՔԵՉ ԲԱՑԻ

«ՏԵ՛ր, եթե զըրթունս իմ բանամ,
Բերան իմ երգեսցե զօրհնութիւնս Քո»:

Կիրակի, 17 Մայիսի 2020-ի առաւօտն է: Աղօթքս կատարեցի եւ խաղաղ սրտով կը պատրաստուիմ մասնակցել ս. պատարագին: Արդէն երրորդ ամիսն է, համաճարակի մեկուսացման շրջանին գուցէ աւարտին ենք հասած: Իւրովի խորհրդածութիւններս ինձ մտածել կու տան, թէ ինչպէ՞ս կարելի եղաւ տոկալ կեանքի այս տարօրինակ իրավիճակին, որն եւ պարտադրուեցաւ ողջ աշխարհի վրայ զգուշաւորութիւն դրսեւորելու ու համաճարակի տարածումը կասեցնելու համար: պատասխանն այն է, որ Աստուած բոլորիս մէջ աւելցուց գիտակցութեան ու համբերութեան չափը եւ ի մասնաւորի աղօթքով զօրացած դիմագրաւելու այս փորձութիւնը եւս:

Աստուած ամենակարող, Քեզի կու գամ այս առաւօտ եւ աղօթքի այս բառերով կը սկսիմ Կիրակին: «ՏԵ՛ր, եթե զըրթունս իմ բանամ, բերան իմ երգեսցե զօրհնութիւնս Քո»:

Իրօք երանելի է այն մարդը, որ օրը կը սկսի Աստուծոյ հետ, աղօթքով առաջնորդուած կեանքի խոստումով: Որովհետեւ երբ կեանքը կ'ապրինք Աստուծոյ հետ եւ այն կը խմորենք աղօթքի ապրումներով, ապա այդ կեանքը խաղաղ է ու շնորհաբաշխ:

Այս Կիրակի, գուցէ առաջին անգամն ըլլալով, ես ինձ հարց կու տամ, թէ ինչու՞ համար եւ ինչպէ՞ս է, որ մարդիկ չարին դերակատարողը կը դառնան եւ պատուիարտուի կողմէ ուղղորդուած կը միտին արատաւորել մարդուն կեանքը առանց հիմնաւորումի: Բնական է՝ այդպիսիք ոչ միայն անհատին կրնան կամ կը փորձեն նեղութիւն պատճառել, բայց առաւել եւս խանգարել նաեւ համայնքին կեանքը: Այդպիսիք կը յաջողին ժամանակի մը համար, բայց կը մոռնան, որ արդարութիւնը

թերեւս կ'ուշանայ, բայց ի վերջոյ վրայ կը հասցնէ: Եւ գուցէ Աստուած առիթ կ'ընծայէ, որ չարանենց խորհուրդներով առաջնորդուած մարդիկ ունենան անդրադարձումի ու զղջումի պահը, եւ եթէ այդ տեղի չունենար, արդէն Աստուած կը կատարէ դատաստանը: Ահա նոյն փորձառութեան մէջէն կ'անցնիմ նաեւ ես, եւ մամոնայի ծառաներ, որպէսզի ծածկեն իրենց անիրաւութիւնները, կը փորձեն եւ շատ դառն հարուածներով կ'աշխատին արատաւորել ինձ, մոռնալով սակայն, որ ի տարբերութիւն իրենց կեանքի ճանապարհին իմ կեանքը մութ չէ եւ ոչ ալ հանգուցաւորուած տարիներու վրայ բարդուած անիրաւութիւններով ու խարդախութիւններով: Եւ փառք Աստուծոյ, խաղաղ է հոգիս ու խիղճս, եւ այդ է նաեւ պատճառը, որ անհիմն ժայռակերտ քարեր չեն կրնար կործանել ինձ: Անշուշտ կը ցաւիմ, եւ սակայն հաւատքս իր արմատն է գտած Աստուծոյ մէջ եւ նոյն հաւատքով աղօթքս կը բարձրացնեմ առ Աստուած աղօթքի այս բառերով, որոնց մէջ գտած եմ ի մանկութենէ եւ այսօր ուղին իմ կեանքին. «Տէ՛ր, եթէ զոյգունս իմ բանամ, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Թո»:

Տէր իմ Աստուած, Դուն ես քննողը մարդկանց սիրտերուն: Թու Աջին զօրութիւնը ամրացուց զիս գիշեր ու ցերեկ: Պիտի շարունակեմ քայլել Թու ուղեգծած ճանապարհէն եւ Թու խօսքերը պիտի դարձնեմ լոյսը իմ կեանքին: Ինչքան փորձութիւններ կը շրջապատեն ինձ, այնքան կ'առատացնես իմ մէջ համբերութեան չափը եւ աւելին հաւատքս կը դարձնես անդրդուելի:

Փառք Թու Ամենագօր Տէրութեանդ:

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

2019 թուականին Վեհափառ հայրապետը մեզի վստահեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության նուիրահաւաքի պարտականութիւնը: Սա ինքնին ընդարձակ առաքելութիւն մըն էր եւ մեր ժամանակացոյցի որոշակի օրեր տրամադրեցինք՝ այցելութիւններով հանդերձ: Այստեղ կը ներկայացնենք միայն մեր խօսքերէն մէկը: Իսկ զեկոյցները հրապարակուած են իր ժամանակին:

«Ս. Էջմիածին – այս անուանումը մեր ս. եկեղեցւոյ եւ ազգի կեանքին մէջ ունի իր խոր իմաստը: Էջ-Միածին – կը բացատրէ Աստուծոյ Միածին Որդւոյն երկինքէն երկիր այցը մեր հայրենական հողին վրայ, որուն տեսիլքն ունեցաւ Լուսաւորիչ հայրապետը, եւ նոյն տեսիլքին հաղորդակցութեամբ մեր ազգի զաւակունք Քրիստոսի ներկայութեամբ պայմանաւորեցին իրենց կեանքի նոր ընթացքը՝ ապրելու քրիստոնէական հաւատքով, որ կը թելադրէ Քրիստոս դարձնելու մտատիպարը մեր կեանքին, ու կեանքն առաջնորդելու Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող պատգամներով:

Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա Կաթողիկոս երբ կը խօսի Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մասին, կը կատարէ հետեւեալ հաստատումը.

«Մեր հոգու առաջ կենդանանում է հայի հոգեւոր վերածնութեան սկիզբը, Լուսաւորչի հսկայ անձնաւորութիւնը իւր կենսաբեր գործունէութեամբ եւ հետեւանքներով: Նա անձեռագործ մի արձան կանգնեցրեց աւելի տեւական ու աւելի խօսուն, քան պղինձն ու երկաթը, բայց եւ այդ անձեռագործ արձանի յայտարար հիմնեց այն անշուք շէնքը, որ, սակայն, հայու վերածնունդի աւագանն է եղել դարէ ի դար»:

Ս. Էջմիածինը՝ «Հայու վերածնունդի աւագանը»: Յովսէփեանց Կաթողիկոս Ս. Էջմիածնի աստուածակերտ

տաճարին մէջ կը տեսնէ Քրիստոսի ներկայութիւնը եւ անով մեր ազգի կեանքին մէջ ուղեգծուած ճանապարհը նոր կեանքին: Հայոց քրիստոնէական հաւատքին մէջ ներթափանց կեանքով ապրած Կաթողիկոսը մեզ կը յիշեցնէ Տիրոջ խօսքը՝ այն դարձնելու համար էութիւնը մեր կեանքին, եւ նոյն խօսքով մեր կեանքը դարձնելու մանրակերտը Ս. Էջմիածնի. «Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ»:

Այս խօսքին մէջ մենք կ'ըմբռնենք այն գերագոյն ճշմարտութիւնը, որ ի Քրիստոս մկրտութեամբ մենք կը դառնանք նոր: Քրիստոսի մէջ կը գտնենք ճշմարիտ կեանքի աղբիւրը, «մի նոր եւ ճշմարիտ կեանքի սկիզբ»:

Մեր խօսքը կ'ուզենք կառուցել մի քանի հիմնական խորհուրդներու վրայ: Առաջինը, Ս. Էջմիածնի մայր լինելու հանգամանքն ու առաքելութիւնն է: Այս ուղղութեամբ անփոխարինելի մտածումներ ու բացատրականներ են հասած մեզի:

«Նա (Ս. Էջմիածինը) հիմնուած էր հոգեւոր դաստիարակութեան մայր լինելու, նորանից պիտի բխէին Աւետարանի լուսոյ ճառագայթները՝ հայութեան սրտի խորքերը լուսաւորելու» (Գարեգին Յովսէփեանց):

Հոգելոյս Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոս ինք եւս կը շեշտէ Ս. Էջմիածնի մայր լինելու հանգամանքին վրա հետեւեալ բառերով. «Քրիստոնէական հաւատքի վաւերականութիւնը, պատմականութիւնը եւ կենդանութիւնը մեր ժողովուրդի գիտակցութեան մէջ երաշխաւորուած են ու խորհրդանշուած միմիայն մեր ազգային մայր եկեղեցիով եւ աստուածակառոյց Սուրբ Էջմիածնով, Մայր Աթոռիս՝ մեր ս. եկեղեցու միւս երեք նուիրապետական-տեղական Աթոռներու հետ միութեան, հաղորդակցութեան եւ եղբայրական գործակցութեան պայմաններում»:

ՀԱՅ ԴՊՐՈՑ

Քառասուն տարիներու հովուական իմ կեանքը ներգրաւուած մնաց նաեւ հայ դպրոցի առաքելութեանը մէջ: Դեռեւս Անգլիայէն սկսած, Գանատա եւ այժմ Արեւմտեան Թեմէն ներս դպրոցի առաքելութեան միշտ հաստատ մնացինք: Հայ դպրոցը պիտի ընկալել ամենալայն առումով: Կեանքն արդէն դպրոց է ինքնին: Իսկ երբ միջավայրը կը դարձնենք դպրոց, ապա այն ժամանակ յաջողած ենք մեր առաքելութեան մէջ:

Ինձ համար առաջին դպրոցը հայ ընտանեկան օջախն է: Ընտանիքէն կը սկսի դպրոցի առաքելութիւնը, եւ առանց ընտանիքի հիմք ունենալու ամենօրեայ թէ շաբաթօրեայ դպրոցներ կը ձախողին իրենց առաքելութեան մէջ: Երբ կը խօսինք հայ դպրոցի մասին, վստահ պիտի ըլլանք, որ հայ դպրոցը միայն լեզու եւ պատմութիւն եւ առընթեր նիւթեր ուսուցանող յարկ չէ: Աւելին, հայ դպրոցը կը մշակէ աշակերտը՝ դառնալու համար տիպար ու քաղաքակրթուած անձը: Ահա այս գիտակցութեամբ հայ դպրոցը պէտք է տարբերել ընդհանուր դպրոց հասկացողութենէն. Հայ դպրոցին մէջ կը մշակուի հայ մարդը՝ հաւատքի գիտակցութեամբ ու հայրենասիրութեամբ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ

Իմ ուսանողական թե՛ հովուական կեանքին մեջ ես երբեւէ չեմ զլացած իմ համակ սերն ու յարգանքը ընծայելու հայոց հայրապետներու նկատմամբ: Մեր եկեղեցական կեանքին մեջ այս է սպասուածը իւրաքանչիւր հայ հոգեւորականէն եւ հաւատացեալ սպասաւորէն: Մանկութեան տարիներուն իմ մեծերը այդպէս են դաստիարակած ինձ եւ հազար փառք Աստուծոյ, որ այդ ներշնչումով են լեցուած կեանքիս տարիները:

Դեռ մանուկ հասակէս առիթն եմ ունեցած երկու անգամ տեսնելու Տանն Կիլիկիոյ պարթեւահասակ հոգեւոյս Զարեհ Ա. Կաթողիկոսը, որուն անունը բարոյթին կը խորհրդանշէ: 70-ական թուականներուն վայելած եմ հոգեւոյս Խորէն Ա. Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի հայրական խնամքը, որուն մեջ գտած եմ նաեւ վարչականօրէն հմուտ հոգեւորականը: 1976-ի Սեպտեմբերին Վազգէն Ա. Վեհափառի ներկայութեան ապրած եմ հոգեւոր վերածնունդը իմ կեանքին: Մեծութիւնը, որուն առջեւ միայն պէտք է խոնարհած մնալ:

1995 թուականին, թէկուզ կարճ ժամկետի մը համար, վայելեցի տեսլապաշտ Գարեգին Ա. հայոց հայրապետի ճառագայթող ներկայութիւնը, որուն անձին մեջ կարծէք մագնիսականութիւն կար: Նոյն շրջանին պարբերական այցելութիւններու ժամանակ ներշնչուեցայ նաեւ Արամ Ա. Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի ներկայութեամբ, որուն ձգտումը՝ հայ եկեղեցին յաչս օտարներու ներկայացնելու, եղած է իրօք անուրանալի յաջողութիւն մը:

Այսօր բոլորին համար յարգանքի ու սիրոյ արժանի է Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսը, որուն օրօք Ս. Էջմիածինը, իր Մայրավանքով, դարձած է անճանաչելի ու պատիւը ողջ հայութեան: Իր կաթողիկոսութեան ընդարձակ գործունեութիւնը արձանագրուած պիտի մնայ պատմութեան մէջ:

Իմ երախտագիտութիւնը բոլորին անխտիր, որոնք իմ հոգեւոր էութեան մէջ հետք են թողած եւ իմ մէջ մշակած հայ հոգեւորականը:

ԵՂԵՌՆԻ 100-ԱՄԵԱԿԸ

Հայոց Ցեղասպանությունը մարդկության պատմության մեջ արձանագրուած է որպէս 20-րդ դարու առաջին ցեղասպանությունը, եւ քանի դեռ աշխարհը լիարժէք չէ ճանչցած հայոց Ցեղասպանությունը, պատմության մեջ պիտի արձանագրուի նաեւ որպէս պարտուած արդարութեան կանչը:

Հայ մարդը չի կրնար լուռ մնալ Ցեղասպանութեան ճանաչումը մերժող եւ արհամարհող ժողովուրդներու ներկայութեան: ...2015-ին, հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման արարողութեանց շրջան վկայութիւնն է մեր հաւատքին ու վճռականութեան: Այս առիթով Լոս Անճելըսի մէջ նախաձեռնող եղանք ի մի բերել աւելի քան հարիւր քսան կրօնական հաստատութիւններ, որոնց հետ հաւաքական աղօթքով ոգեկոչեցինք յիշատակը հայոց Ցեղասպանութեան սուրբերուն:

Մեր ա. եկեղեցւոյ եւ ազգի զաւակաց կեանքի առաքելութիւնը պիտի ըլլայ խոնարհիլ ա. նահատակաց յիշատակին: Քանզի երկվայրկեանի մը համար եթէ զանանք կատարել յարգանքի մեր տուրքը, արդէն իսպառ կորստեան ենք մատնուած:

Մեր ա. նահատակները մեզի որպէս ժառանգ են վստահած մեր հաւատքն ու հայրենիքը: 100-ամեակը անկասկածօրէն իւրաքանչիւր հայորդու կեանքին մէջ դարձաւ նոր հանգրուան մը եւ հիմնաքար՝ կեանքի նոր ճանապարհորդութեան մէջ:

ՆՈՐ ՕՐԵՐ. ԱՆՏԵՍԱՆԵԼԻՆ

Այս օրերուն բոլորս կ'ապրինք աննախադեպ փորձառութիւններ: Հազարումէկ փորձութիւններու բովէն անցած բոլորիս կեանքը նոր մարտահրաւերի մը առաջ կը գտնուի: Մտածեցի, որ արժէ նաեւ ընթերցողներուն հետ բաժնել օրինակներ իմ նամակներէն՝ յղեալ հովիւներու եւ ժողովուրդին, որոնք նաեւ կ'արտացոլեն օրուան տրամադրութիւնները:

«Սիրելիներ ի Քրիստոս: Ձեզ կը գրենք՝ հիմք ունենալով Յովհաննու Ա. Թուղթն քաղուած պատգամը. «ՉԱստուած ուրուք երբեք չենք տեսնալ, եթէ սիրեսցուք զմիմեանս, Աստուած ի մեզ բնակէ, եւ սեր նորա ի մեզ կատարեալ է»:

Այս օրերուն, համայն աշխարհի մարդկութեան կեանքին կողմնորոշիչը պիտի ըլլայ սերը Աստուծոյ հանդէպ: Եւ ինչքա՛ն յարաճուն է Աստուծոյ սերը միմեանց նկատմամբ, այնքան աւելի զօրեղ է մարդը՝ դիմագրաւելու համար իր առջեւ ծառացած դժուարութիւնները:

Չատկական տօնի նախօրէին բոլորիս սրտերը տխուր են, բայց անկասկած հաւատքի մէջ տկարացած չենք եւ բոլորով պիտի տոկանք մարդկութեան կեանքին մէջ ծաւալուած coronavirus-ի ահեղ վտանգին առջեւ: Տխուր ենք, որովհետեւ Չատկական տօներուն մեր աւանդական հանդիսութիւնները ժողովուրդին հետ տօնախմբելու ենթահող այսօր չունինք, բայց պիտի տոկանք, քանզի մեր ամբողջ կեանքը եղած է Յարութեան ճանապարհը, եւ մեր հաւատքին պտուղը պիտի դարձնենք քաջութիւնը՝ որպէս անթառամ ծաղիկ մեր անշիրիմ սուրբ նահատակներու յիշատակին:

Մեր աղօթքը ձեզի հետ է: Դուք, սիրելի հոգեւոր եղբայրներ, պիտի դառնաք հոգեւոր սպառազինութեան մղիչ ուժը Աստուծոյ խօսքին քարոզութեամբ, եւ ձեզ հետ աղօթական ժողովուրդը պիտի դարձնէք ձեր առաքեալները:

Ձեզ, սիրելիներ, ի բոլոր սրտէ կը մաղթենք բարի Չատիկ:

*Քրիստոս յարեալ ի մենելոց,
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի:*

ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայ հոգեւորականը չի կրնար անտարբեր մնալ հայրենիքի նկատմամբ: Համաճարակի օրերուն, ինչքան ալ թեմը ունեցած էր դժուարին ժամանակներ, այնուամենայնիւ մեր հոգու պարտքը կատարեցինք նաեւ հայրենիքի նկատմամբ: Այստեղ կը ներկայացնենք մեր Ապրիլ 1, 2020 թուակիր պատգամը, որ եւ կ'արտացոլէ մեր գնահատանքը Հայաստանի նկատմամբ:

Այսու գրութեամբ կ'ուզենք իրազեկ պահել մեր Թեմի հոգեւոր հովիւներուն ու Ծխական մարմիններուն, որ այս օրերուն լուրջ իրավիճակ է ստեղծուած նաեւ Մայր Հայաստանի մէջ: Բոլորս ալ գիտենք, որ Հայաստանը չունի հնարաւոր բոլոր միջոցները լիարժէք պայքարելու համար այս իրավիճակին դէմ՝ առաջքն առնելու համար coronavirus-ի առաջ բերած վտանգին:

Այս կապակցութեամբ նամակ ենք ստացած Մայր Աթոռէն, որպէսզի հնարաւորին մեր գորակցութիւնը ցուցաբերենք կեանքեր փրկելու համար: Միառժամանակ մշտական կապի մէջ ենք Վեհափառ Հայրապետին հետ, որ իր հերթին իրազեկ կը պահէ մեզ կացութեան մասին եւ կը յուսայ մեր գորակցութեան:

Սիրելիներ, մենք արդէն իսկ ձեռնարկած ենք նուիրահաւաքին եւ այս դժուարին օրերուն մեր կարելին ի գործ կը դնենք՝ հասնելու մեր քոյրերուն ու եղբայրներուն ի Հայաստան: Բոլորս միասին պիտի կրենք այս ծանր բեռը եւ գործնական աղօթքի մեր բաժինը բերենք: Մեր թեմի կողմէ հաւաքուած նուէրները Մայր Աթոռի միջոցով պիտի փոխանցուին պետութեան, որպէսզի տրամադրուին համապատասխան կարիքներուն:

Արդ, կը խնդրենք, որ ձեր կարելին ի գործ դնէք, որպէսզի միասնաբար այս ծանր իրավիճակին մէջ աղօթքի մեր ձայնը հասցնենք նաեւ մինչեւ Մայր Հայրենիք:

Այսօր, Առաջնորդարանը յանձնառու եղաւ իր առաջին նուէրը փոխանցելու Մայր Հայաստան: Ծով կարիքներու առջեւ մեր կատարածը գէթ կաթիլ մըն է: Այնուամենայնիւ ամեն կաթիլ կեանք մը կը փրկէ: Փորձենք դառնալ կաթիլներ, որպէսզի կեանքեր փրկենք:

Ո՞Վ Է ԵԿԵՂԵՑԱԿԱՆԸ, Ո՞Վ Է ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԸ

«Եկեղեցական» սահմանումը կարելի է վերագրել բոլորին անխտիր, ովքեր կը հաւատան եկեղեցու առաքելութեան: Իսկ երբ խօսքը հոգեւորականի մասին է, ապա այն կը խօսի այն մարդու մասին, որ կոչում է ստացած Աստուծմէ ծառայելու իրեն վստահուած ժողովուրդին, տարածելու համար Աւետարանի լոյսը:

Հոգեւորականը նուիրումի կեանքով ապրող անձն է, ով բոլորի համար հայր է ու սպասաւոր: Խորհրդաբար կ'ուզեմ ըսել, որ ինձ համար հոգեւորականութիւնը եղաւ ճշմարտապէս հոգիս ուրախացնող ճանապարհորդութիւն մը: Մարդկային կարողութեանս պայմաններուն ներածին չափով սիրեցի իմ ժողովուրդը, ծառայեցի ինչքան ուժերս ներեցին, եւ այս բոլորը կատարեցի հաւատարմութեամբ ու անկեղծ սիրով:

Երբ այս տողերը թուղթին կը յանձնեմ, ապա կը զգամ, որ անցնող 40 տարիներու ընթացքին ինչքա՛ն օրինա՞ծ է Աստուած իմ կեանքը, որուն համար երախտապարտ եմ նաեւ իմ ժողովուրդին, որ միշտ պատրաստակամ եմ հոգուս պարտքը կատարելու:

Քառասուն տարիներու իմ հովուական ծառայական կեանքը ինձ սորվեցուց, որ տիտղոսներն ու աստիճանները անկարելոր հանգամանքներ են, եթէ փառքի համար են ձեռք բերուած: Ինչու՞, որովհետեւ տիտղոսներն ու աստիճանները մարդը եւ առաւելաբար հոգեւորականը կը խոնարհեցնեն: Եւ երջանիկ է այն հոգեւորականը, ով խոնարհ է կեանքով:

ՏԱԿԱԻՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՈՒՆԻՄ

Մարդը այնքան ժամանակ որ կ'ապրի, իր կեանքը պիտի լեցնէ նոր հեռանկարներով ու տեսիլքներով: Էական չէ մեր տարիքը, բայց կարելոր է, որ շնչաւոր էակը միշտ ըլլայ ստեղծագործող:

Երբ կը խօսիմ այն մասին, որ «տակաւին հեռանկար ունիմ», մտածումն այն չէ, որ անձ մը կրնայ ամէն ինչ իր լրումին հասցնել: Պարզապէս կ'ընենք այն, ինչ որ կրնանք իրագործել ժամանակի մը մէջ, եւ մնացեալը կը թողունք գալիք սերունդներուն:

Ներկայիս, անկեղծօրէն, իմ գլխաւոր հեռանկարը այն է, որ քառասուն տարիներու իմ փորձառութեան վրայ հիմնուած կարողանամ գրառումներ կատարել եւ ուղեցոյցներ պատրաստել ընդհանրապէս՝ նուիրուած եկեղեցւոյ առաքելութեան եւ անոր առնչակից բոլոր վարչաձեւերուն, ծխական համակարգին եւ այլն: Ինչու՞: Որովհետեւ կ'ուզեմ օգտակար հանդիսանալ նոր սերունդներուն, որպէսզի շատ արագ փորձառութիւն ձեռք բերելով՝ ի վիճակի ըլլան նորը ստեղծելու աւելի յաջող ու արդիւնաւոր եկեղեցանուէր գործունէութիւն ծաւալելով: Իմ անձնական կեանքի փորձով եւ շատ բան սորված եմ իմ մեծերէն եւ միշտ երախտապարտ եմ անոնց:

ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿԸ... ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՐՑԱԶՐՈՅՑՈՎ

Այս աշխատության ամառտին ծրագրած եմ հրապարակելի ծառայուն անգլերեն հարցազրույց մը, հաւանաբար Vis a Vis Christianity տիտղոսագրուած, որուն մէջ ամփոփուած պիտի ըլլայ իմ ամբողջ մտածողութիւնը տարիքային առանձնայատկութիւններով ներկայացուցած: Հարցազրույցը գրեթէ ամառտած է, եւ հաւանաբար անոր հրապարակումը կարելի դառնայ 2020-ի տարեվերջին:

Անկեղծօրէն սխալ պիտի ըլլայ իմ կողմէ գնահատական տալ «Նոր Ձեռնարկին», բայց գէթ այնքանը կ'ուզեմ ըսել, որ իրօք իր տեսակին մէջ իւրօրինակ աշխատանք մըն է հարցազրույցը: Ինձ տրուած բոլոր հարցերուն պատասխանած եմ անկաշկանդ եւ գիտեմ, սակայն, որ շատ պարագաներուն պատասխաններ եղած են անբաւարար:

Աշխատանքը իրօք հետաքրքիր է, որովհետեւ տեսակետով մը ինքնակենսագրութիւն է եւ միաժամանակ կը ներկայացնէ եւ՝ իմ հաւատքին կեանքը իր ելեւեջներով, եւ՝ իմ փիլիսոփայութիւնը կեանքին հանդէպ: Ձեռնարկի բոլոր էջերուն մէջ որոշակիօրէն երեւելի է իմ կեանքի ուղին՝ դէպի Աստուած:



Western Diocese of the Armenian Church of North America

3325 North Glenoaks Blvd, Burbank, CA 91504

Tel: (818)558-7474; Fax: (818)558-6333;

E-mail: info@wdacna.com; www.wdacna.com

Diocesan Publication 2020